

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԾ ԳՐԱՏՎԱՔԱՂՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԱՄԱՏԵԼԻ ՍԵՐԻԱ № 3

ԷԴ. Ա. Ա. Ա. Ա.

ՆԻԶԱՄԻ ԳՅԱՆՁԵՎԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԾ ԳԱ ՀՐԱՏՎԱՔԱՂՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1948

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՆՐԱՄԱՆՁԵԼԻ ՍԵՐԻԱ № 3

A

26-44

ԷՊ. ԱՂԱԶԱՆ

D
Huy

ՆԻԶԱՄԻ ԳՅԱՆՁԵՎԻ

2776

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1948

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
Խախագահության կարգադրությամբ:

Հայկական ՍՍՌ ԳԱ. Պրեզիդենտ Վ. Հ. ՀԱՐՄԱՐՉՈՒՄՅԱՆ

Պատկի պատասխանառու խմբագիր՝
Մ. ՄԿՐՅԱՆ

Է. ԱԳԼՅԱՆ

НИЗАМИ ГЯНДЖЕВИ

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР, Ереван, 1948 г.

ՆԵԶԱՄԻԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՔ

Մովեսոական Միության եղբայրական ժողովուրդները 1947
ահաբետեմբերին տոնեցին աղրբեջանական ժողովրդի հանճարեղ
անաստեղծ Նիզամի Գյանջեվիի ծննդյան ութշարուրամբակը: Նի-
մմին մենքն է անցյալի այն նշանավոր մարդկանցից, որոնք ի-
նչ ստեղծագործություններով նշանակալից ավանդ են թողել
մաշնաբհային գրականության գանձարանում: Լինելով մեծ
աղանդի տեր և կրիով իր ժամանակի առաջավոր գաղափար-
ակրք՝ Նիզամին իր գրական ժառանգությամբ կենդանի է մնացել
ու միայն աղրբեջանական ժողովրդի, այլև ամբողջ Արևելքի ժո-
ղովուրդների սրտում: Նրա ստեղծագործությունները վաղուց ար-
դեմ ժողովրդական լայն մասսաների սիրելի երկերն են դարձել ոչ
միայն իր հայրենիքում, այլև արևելյան շատ երկրներում (Ուզ-
բեկաստան, Տաջիկաստան, Իրան և այլն): Նրա երկերի հերոսները,
Հասկապես լելլին ու Մեջնունը, որպես դժբախտ սիրահարների
կերպարներ, Հանրածանոթ են արևելյան բոլոր ժողովուրդներին և
ամբողջ Արևելքում դարձել շառունակ իրքն համեմատությունների
ու բանաստեղծական պատկերների աղբյուր են Հանդիսացել: Նրա
ստեղծագործությունների մեջ արտահայտված առաջավոր գաղա-
փարները, նրա ժողովրդասիրությունն ու հումանիզմը այսօր էլ
Նիզամի նկատմամբ հարազատ ու ջերմ զգացումներ են զար-
թեցնում Սովետական Միության եղբայրական ժողովուրդների մեջ,
ժողովուրդներ, որոնք ըստ արժանվույն են գնահատում անցյալի
շանավոր մարդկանց:

Նիզամիի ապրած ժամանակաշրջանի, այն է՝ տասներկուերորդ
դարի Աղրբեջանը բնորոշվում է տնտեսական ու կուլտուրական
անախարնթաց վերելքով: Առանձնապես աշքի է ընկնում խոշոր
ֆինդայական քաղաքների զարգացումը, որոնք մեծ դեր են խա-
ղում: Երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքում: Թուրքուա-

կան արևելագիտությունն այդ էպոխայի կուսուբայի զարգացումը՝ ոչ միայն Աղբբեջանում, այլև Անդրկովկասի մյուս ժողովուրդների մոտ, կապում է սելջուկների տիրապետության հետ։ Առանց նկատի առնելու Արևելքի ժողովուրդների, առանձնապես Անդրկովկասի ժողովուրդների սոցիալ-տնտեսական զարգացումը, առանց հաշվի առնելու այդ ժողովուրդների կյանքում կատարված ներքին տեղաշարժերը, բոլոժուական արևելագիտուները 11—12-րդ դարերի Աղբբեջանի տնտեսական ու կուսուր-քաղաքական վերելքը վերաբռն են սելջուկներին։ Մինչդեռ սելջուկները ի վիճակի չին զարգացնելու իրենց գրաված երկրների ոչ տնտեսությունը և ոչ էլ կուսուրան հենց այն պարզ պատճառով, որ նրանք տնտեսական ու կուսուրական զարգացմամբ շատ ու շատ ցածր էին կանգնած իրենց նվաճած ժողովուրդներից։ 12-րդ դարում Աղբբեջանի տնտեսական ու կուսուրական վերելքի զարգացման հիմքերը ոչ թե պետք է փնտրել սելջույան տիրապետության, այլ հենց իր իսկ՝ Աղբբեջանի պատմական զարգացման մեջ։ Նախապես պետք է շեշտել որ սելջուկները՝ տիրելով Աղբբեջանին, այնուամենայնիվ չկարողացան իրենց իրենց ենթարկել երկրի տնտեսական կյանքն՝ ամբողջությամբ վերցրած և, դրա շնորհիվ էլ, չկարողացան փոխել երկրի տնտեսական կերպարը։ Այս իր հերթին արդյունք էր այն բանի, որ՝ ա) սելջուկյան լայնատարած տիրապետություններում անժիշտապես ծայր առան կենտրոնախույս ձգտումներ, և շուտով երևանի եկան կիսանկախ կամ բոլորովին անկախ իշխանությունները։ Աղբբեջանի մի զգակի մասը՝ Շիրվանը, ամբողջ սելջուկյան շրջանում միայն մի կարճատև ժամանակ, այն է՝ սելջուկյան սուլթան Մելիք-Շահ (1072—1092) օրոք ենթարկվեց սելջուկներին, և շիրվանշահերը հարկատու եղան նրանց։ Հենց այս հանգամանքներն էլ կարևոր դեր խաղացին Աղբբեջանի տնտեսական ու կուսուրական զարգացման տապարեզում։ Տասներկուերրորդ դարու հանդիսանում է Շիրվանի անցքաջի պատմության ամենափայլումը շրջաններից մեկը։ Վարչական ու տնտեսական անկախությունը զարկ է տալիս Շիրվանի հետագա հզորացմանը, իսկ այդ շափականց մեծ նշանակություն է ունենում ամբողջ Աղբբեջանի համար։ Նույն տասներկուերրորդ դարում (1136 թվին) սելջուկյան կողմանվոր պետության ընդարձակ տիրապետությունների մեջ բարձրացող անկախ իշխանությունը թվում կազմվում է նաև հարա-

վային Աղբբեջանի աթաքեկությունը, որի մեջ մտնում է և Գյանշան։ Մինչև 1152 թիվը հարավային Աղբբեջանի աթաքեկ իդիգի-զը ձնթակա էր սելջուկյան գերագույն իշխանությանը, բայց սուլթան Մահմադից հետո յուր աթաքեկությունը դարձեց անկախ ու ինքնուրույն իշխանություն։ Ահա հենց այս երկու իշխանություններն էլ հանդես են գալիս իբրև երկու հիմնական ֆեոդալական կենտրոններ, որոնց շուրջը համախմբվում են երկրի ամբողջ ֆեոդալական ուժերը։ Վերջապես, Աղբբեջանի կյանքում շահագանց նշանակալից դեր է խաղում Վրաստանի հետ կնքած գաշհնը շիրվանշահերի կողմից։ Երկու հարևան ժողովրդները միացյալ ուժերով կովում են թշնամիների դեմ, այլ և անտեսական սերու հարաբերություններով մեծապես նպաստում երկու երկրների տնտեսական ու կուսուրական զարգացմանը։

Զափագանց կարևոր դեր է խաղացել Աղբբեջանի զարգացման գործում մի ուրիշ հանգամանք ևս։ Տասը—տասներկուերրորդ դարերը նշանակուր են Աղբբեջանի պատմության մեջ էթնիկական կազմի զգակի փոփոխություններով։ Այդ դարերի ընթացքում Աղբբեջանի տերիտորիայում բնակություն են հաստատում օգուզների, կիպչակների, թուրքմենների և այլ թրքակեզու ցեղեր, որոնք և էջմիթ, կրոնի, ինչպես և սոցիալ-տնտեսական պայմանների որոշ բնդաւանրության շնորհիվ հետապնդյամբ ձուլվում են մինչև այդ Աղբբեջանում եղած թրքակեզու ուրիշ ցեղերի հետ։ Այս հանգամանքը մեծ դեր է խաղում աղբբեջանական ժողովրդի վերջնական կազմակորման պրոցեսում։ Նախ՝ հենց տեղի և եկվոր թրքայեզու ցեղերի ունեցած գերակշռության շնորհիվ շուտով աղբբեջաններն ըստում է Աղբբեջանի բնդանուր էթնիկական լեզուն։ Ինչպես արդին ճիշտ կերպով նշել են սովորական արևելագիտները, տասներկուերրորդ դարում ոչ միայն ուժեղանում է աղբբեջանական ցեղերի միավորումը, այլև առավել էին ու բազմաթիվ ցեղային լինզումներն սփոխարինում է կազմակորուգ աղբբեջանական միասնական էթնիկական լեզուն՝ ամբողջ Աղբբեջանի տերիտորիայում։ Այդ, մյուս կողմից, նպաստեց նաև տեղական այլ ցեղերի ձուլման՝ աղբբեջանական ժողովրդին։ Այս էթնիկական վերակազմակորումն էլ, ահա, իր հերթին մեծապես ազդեց Աղբբեջանի սոցիալ-տնտեսական զարգացման վրա։ Առաջ եկած խոշոր ֆեոդալական քաղաքներն աստիճանաբար էլ ամելի մեծ կշիռ են ստանում

երկրի կյանքում: Իսկ այդ քաղաքներում կենտրոնացող բազմազգի արհեստավորական ու առևտրական տարրերը ուժին թափով զարդացնում են արհեստագործությունն ու առևտուրը: Այդ է վկայում այն փաստը, որ հենց այդ ժամանակաշրջանում առանձնապես զարգանում են Գյանջային զուգընթաց այնպիսի քաղաքներ, ինչպիսիք են Նախիջևանը, Բալլաբանը, Շամախին, Դերբենդը: Թեև այդ բոլոր քաղաքներն ել ուղղակի կախման մեջ էին ֆեոդալ-սիրակալից, բայց և այնպես վաճառականական և արհեստավորական խալիքն օգտվում էին ինքնավարության որոշ նղանեակներով: Այս էպոխայում առհասարակ ուժեղանում է դասակարգային պարբեր ֆեոդալականության գեմ: Ուշագրավ են առանձնապես արհեստավորների զարդարությունները: Դրանք մի տեսակ հնդինապաշտպանության կազմակերպություններ էին, որոնց նպատակն էր պաշտպանել արհեստավորների շահերը և հանրավորին շափ արգելը հանդիսանալ վերնախալիք կողմից ծայրահեղ շափերի համացված կեղեքմանը: Այդ բոլոր քաղաքների մեջ թե՛ տնտեսական և թե՛ կուլտուրական ասպարհում առաջնակարգ տեղը պարզում էր Գյանջան: Այդտեղ է, որ առավել քարգացման են համար արհեստներն ու առևտուրը. այս բանում անհրաժեշտ է նշել Արևատանի գերը, որ սերտ հարաբերությունների մեջ լինելով Գյանջայի հետ, անշուշտ, նպաստավոր գեր է խաղացել արհեստների և առևտուրի, և ընդհանրապես, քաղաքային կյանքի զարգացման գործում:

Քաղաքների զարգացմանը զուգընթաց 12—13-րդ դարերում առանձնապես մեծ թափով է զարգանում նաև կուլտուրան: Քաղաքներում կենտրոնացած բազմազդի արհեստավորական-առևտրական խալիքն մեծապես զարկ են տալիս քաղաքային: Կուլտուրայի վերելքին Հենց այդ իսկ արհեստավորների ձեռորդ կերպում են արվեստի այնպիսի հուշարձաններ, որոնք այդ դարաշրջանի պարծանքն են կազմում: Դրանց զարգացումն իր հերում է նաև գիտության որոշ ճյուղերի՝ մաթեմատիկայի, բժշկության և այլն՝ զգալի առաջնութաց: Անշուշտ ինչպես ճարտարագետական կառուցումների ու մետաղյա իրերի պատրաստման բարձր արվեստի հանդես գալը, այնպես էլ առհասարակ կուլտուրայից: ու գիտության զարգացումն այդ էպոխայում, մի ժողովրդի նվաճումը մի կարելի համարել: Դա պայմանավորված էր ամրող Անդրեով:

Հասոք անտեսական ու կուլտուրական վերելքով: Իսկ Ադրբեջանի այդ էպոխայում, ինչպես գիտենք, Անդրկովկասում՝ նշանակալիք ունի էր խաղում, մանավանդ արհեստագործության ու առևտուրի առարկանում: Վերջապես, արհեստների ու կուլտուրայի զարգացմանց զուգընթաց ճյուղապես զարգանում է նաև Ադրբեջանի գրականությունը, և հենց նույն էպոխայում է, որ հանդեմ են գալիս այնպիսի խոշոր բանաստեղծներ, ինչպիսիք են Աֆղանադին Խաքաշեն (մեռել է մոտ 1197 թվին), Աբու-Ն-Նիզամ (մոտ 1108—1146), Մուզիր Բայլաբանին (մեռել է 1196 թվին) և, վերշապես, Նիզամին: Թեև այդ ժամանակաշրջանի ադրբեջանական գրականությունը տակավին հարկ եղածին շափ ուսումնամիջածը չէ, և այդ բանն առաջմմ դժվարանում է ազդյուրների սակագության պատճառով, այնուամենայնիվ եղած ուսումնամիջյունը ներն էլ լիովին հիմք են տալիս հաստատելու, որ 12-րդ դարը ազգրեջանական գրականության անցյալի պատմության մեջ հաճախումնում է ծաղկման զրջաններից մեկը, մի շրջան, որ պատճեն նիզամիի անմահ ստեղծագործություններով:

ՆԻԶԱՄԻԻ ԿՅԱՆՔԸ

Իլլաս Բին-Յուսուփ Նիզամին ծնվել է 1141 թվին, Գյանջա քաղաքում, որի ավերակները գտնվում են այժմյան Կիրովարդից թի քանի կիլոմետր հեռավորության վրա՝ Գյանջա-շայի ափին: Նիզամի բանաստեղծի մականունն է (թախլուա), իսկ Գյանջեվիլից ույց է տալիս նրա ծննդավայրը: Ի գեպ, եվրոպական արևելակետներից ումանք, հենվելով Նիզամիի վերջին ստեղծագործության՝ «Եսքանդար-Նամեխ» մեջ եղած մի տողի վրա, որում հիշվում է Ռում քաղաքի անունը, կամեցնել են Նիզամիի ծննդավայրը համարել Ռում քաղաքը (Իրանում): Սակայն ինչպես հենց եվրոպացի բուրժուական արևելագետներից ումանք են ցույց տվել, այդ տողը հեղինակին չի պատկանում: Այդ բանը վերջնականապես ապացուցել է սովետական արևելագետությունը՝ բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ: Ուստի և բուրժուական արևելագետների այդ «գյուտը» Նիզամիի ծննդավայրի մասին, հիմնովին սիսալ է:

Նիզամիի կյանքի մասին եղած տեղեկությունները շափանեց ազգային են ու կցկուուր: Եղած տեղեկություններն էլ, ուրոնք ըստ մեծի մասին բանաստեղծի երկերից են քաղված, առու-

վերապես վերաբերում են նրա ստեղծագործությունների տարեկությանն ու հրանց հետ կապված որոշ հանգամանքների: Ուստի և՝ կարելի է ասել, թե նրա կենսագրությունը, այն ձևով, ինչպես մինչև այժմ կատարված ուսումնասիրություններով ներկայացվում է, իր իսկ ռոտեղծագործությունների պատմությունն է, թեև, իհարկե, տակամին ու ամբողջական պատմությունը:

Թե ինչպիսի ընտանիքում է ծնվել նիզամին՝ հայտնի չէ. համեմայն գեպս ընդունված է, որ նա իր ժամանման կապված մի եղել ֆեոդարական վերնախառի հետ. ավելի հավանական է համարվում այն, որ նրա հայրը պատկանել է արհեստավորական խավին: Ինչ էլ որ լինի, անկասկած է, որ ծնողները բավարար միշտցնել ունեցել են, որ և հնարավորություն է տվել այն ժամանակական համար անհրաժեշտ կրթություն տալ զավակներին: Նիզամին նցագրը՝ Կիվամ Մովթարիդին՝ նույնպես եղել է բանաստեղծ, բայց նա ընտրել է իր համար մի բոլորավին այլ ուղի, քան նիզամին. դառնալով պալատական բանաստեղծ՝ նա գրել է մեծ ժամանման քատարելով՝ ի փառ ֆեռողական տերերի: Նրա ստեղծագործություններից շափազանց քիչ են հասել մեզ, և դրանք ել բավականաշաբաթ ուսումնասիրված չեն, ուստի և դժվար է որևէ բան ասել նրա բանաստեղծական ձիրքի մասին: Այնուամենայնիվ, վըստահորեն կարելի է ասել, որ նա առանձնապես մեծ հողակի չերժանացել, և ժամանակի բանաստեղծները ստվերի տակ են թողել նրան:

Եղած տվյալները հնարավորություն չեն տալիս պարզեցու, թե նիզամին ե՞ր է զրկվել ծնողներից: Հայտնի է, որ նա ավելի շուտ է զրկվել հրահց. այդ հաստատվում է հենց բանաստեղծի այն խոռոչքրավ, թե մանուկ հասակից իր կրթության հոգու մոր վրա է մնացել Մուր Հոգատարության շնորհիվ նա ստացել է բազմազողականի և իր ժամանակի գիտության մակարդակին համապատասխան կրթությամբ: Նա լիովին տիրապետել է այն ժամանակված մահեղական Արեւելքի երկու գրական լեզուները՝ արաբերենն ու պարսկերենը. ենթադրություն կա, որ իմացել է նաև Հոմեարեն: Նա յուրացել է ինչպես արաբական փիլիսոփայությունը (բնականարար՝ առավածաբանության հետ), այնպես էլ Հոմեական կրասիկ փիլիսոփայությունը, հմուտ է եղել աստղաբաշխությանը, մաթեմատիկային, աշխարհագրությանը, իրավաբանությանը, բժշկու-

թյանը և այլն: Ուշագրավ է, որ Նիզամին, թեև լավ գիտեր ալքիմիս, բայց իսկառ կերպով քննադատում է իր ժամանակի գիտության այդ հոչակված ճյուղը և յի հավատում նրան: Այսպիսառ, նու ոչ միայն լիովին յուրացըրել էր իր ժամանակի ամբողջ գիտությունը՝ յուր բոլոր ճյուղերով, այլև իր գիտական հայցքներով Շառուած էր ժամանակի առաջավոր մոքին, իսկ այդ առաջավոր գաղափարները, ինչպես և գիտության մեջ ոչ ասհմանափակվածությունն, այլ բազմակողմանիությունը, ինչպես հայտնի է, մարածնության դարաշրջանի բնորոշ երևոյթներից են:

Ինչպես նիզամին ինքն է ասում, իրեւ բանաստեղծ հոչակվել է իր գաղելներով դեռևս վաղ երիտասարդության տարիներում, մի բան, որ նշանակում է, թե իր գիտական պարապմունքներին զուգընթաց նա դեռ երիտասարդ հասակում զրադվում էր արդեն պոետիայով: Յուր ընդարձակ գիտության ու բանաստեղծական տաղանդի շնորհիվ նիզամին անշուշտ կարող էր հեշտությամբ մուտք գործել որևէ իշխանի արքունիքը, որպես պալատական բանաստեղծ: Սակայն նա, չնայած իր հնարավորության, չի ընտրում ժամանակի բանաստեղծների մեծագույն մասի սովորական ուղին: Պեսոր է հիշել, որ իր ժամանակի բանաստեղծների ուղղակի երաժանքն էր դառնալ պալատական բանաստեղծ: Առանձնապես այն բանաստեղծները, որոնք շունեին որևէ արհեստ կամ հկամուտի որևէ մշտական ու ապահով աղբյուր, պալատում էին տեսնում ոչ միայն ստեղծագործելու, այլև ապրելու միակ հույսը: Դառնալով որևէ ֆեռդայի պալատական բանաստեղծը, այդ կարգի պետքները միանգամայն ապահովվում էին տնտեսապես, հաճախ մեծամեծ պատիիների արժանանում, բարձրաստիճան պաշտոններ ստանում՝ վայելելով տիրակալի շնորհները: Սակայն, ինչպես պարսիկ բանաստեղծ Սաադին է ասում, պալատական աշխատանքը երկու կողմ ունի՝ «Հացի» հույս և Հոգու երկյուղը: Պալատական բանաստեղծի այդ «Հացի» աշխատանքը վիճակը նախանձելի էր այնքան ժամանակ, քանի դեռ բանաստեղծը չէր հաշակել այդ վիճակի բոլոր «վայելելները»: Դառնալով պալատական բանաստեղծ, այդպիսի պոետները կորցնում էին և իրենց անձնական պատությունը, և տեղծագործական ազատությունը: Նրանց վերուատ արդեն տըրմում էր ստեղծագործությունների թեմատիկան՝ ներբողներով գոփերել ո՞չովանավորացիրակալին, կամ տարփալից գաղելներ գրել,

որպեսզի ցոփ խնջուքներում տիրակալի պալատական երգիշները երբեն Ավելի վատթարը, սակայն, անձնական աղատության կորուստը և «Հովանավոր»-տիրակալի զայրույթի երկյուղն էր: Պալատական բանաստեղծը ամեն բոպէ կարող էր սպասել տիրակալի վերաբերմունքի փոփոխությանը. պալատական խարդախ միջավայրը և, առանձնապես, մրցակից բանաստեղծների մեքենայությունները ընովին հիմք էին տալիս այդպիսի երկյուղի: Պալատական բանաստեղծը, գժուհության դեպքում, այլև դաժանության դեպքում, իր կամքով չէր կարող թողնել պալատն ու հեռանալ. այդ պատճառով էլ, նա, հլու իր վիճակին, մշտապես զգույշ պիտի լիներ՝ իր վրա Հրավիրելու տիրոջ զայրույթը: Իսկ հրավիրել իր վրա տիրակալի ցասումը, հաճախ նշանակում էր ոչ միայն զրկել բոլոր շնորհներից և արտաքսվել պալատից, այլև դաժանությն պատժվել: Այդպիսի «բախտի» էր արժանացել, օրինակ, հոշակավոր պալատական բանաստեղծ Խաթանին՝ ննթարկվելով բանտարկության, այդպիսի պատժի էր արժանացել Ֆելքին՝ մեռնելով բանտում: Ի դեպ, պալատական բանաստեղծների այդ վիճակը չափազանց հետաքրքրական արտահայտություն է գտնել նրանց ստեղծագործությունների մեջ: Չափազանց բնորոշ է, որ իշխանների համար վսիմափայլ ներբողներ գրող պալատական բանաստեղծները թողել են խորը վըշտով ու հոռեստեսությամբ համակված եղերերգություններ (էլեգիաներ), որոնք անշուշտ գրված չեն եղել հրապարակային ընթերցանության համար: Դրանց՝ այդ եղերերգությունների մեջ է, որ տարփալից գաղելների ու շուալ գովասանքներով ճոխացած պերճարան ներբողների հեղինակներն արտահայտել են իրենց խորը վըշտուրը, իրենց հիմասիթությունը՝ պալատական կյանքից ու ձագկել պալատական միջավայրը: Հայտնի է, օրինակ, ներբողների մեծ վարպետնույն Խաթանիի մի եղերերգությունը «Հարսիյե» վերնապով, որի մեջ հեղինակը խոր կակիծով պատմում է իր կրած դառնությունները՝ պալատում: Պալատական բանաստեղծի այս վիճակն էր, ահա, որ կարող էր ընտրել նիզամին և ուներ բողոք տվյալները՝ դրան հասնելու համար, բայց մինչև կյանքի վերջը էլ նա չի դիմում դեպի այդ ուղին և հեռու է մնում պալատներից: Ծնթաղբել, թե նիզամին միանգամայն ապահովված էր տնտեսապես և այդ պատճառով չի դիմել դեպի պալատ, սխալ կլիներ, որովհետեւ հենց իր ստեղծագործությունների մեջ նա շատ հաճախ է գան-

դատվում յուր տնտեսական ծանր կացությունից: Միանդաման արամարանեկան և ընդունելի է այն տեսակետը, որ նիզամին ուղղակի համոզմումքով չի ձգտել պարատական բանաստեղծի վիճակին. նա չի հաշտվել այն մտքի հետ, թե մի կտոր հացի համար պետք է ննթարկվել բռնականի ամեն մի քմահաճույքին: Նա գտնում է, որ ավելի լավ է բավարարվել համեստ ապրումով, քան թե զիմել բռնականների «բարեհաճությանը» և դառնալ նրանց ստրուկը: Նա այն համոզմունքին է, որ չի կարելի հլությամբ իրեւ բռնությունը:

Ինչո՞ւ հանձնում մա հարվածի պարանոցդ հուզորեն, ինչու տանում ես լուս ու մունջ՝ բռնությունը անօրեն, եղի՛ր դու փուշ, պահի՛ր մեջքիդ սլաքները սրասայր::

Բացի այդ, նա չի հավանում նաև պալատական բանաստեղծների ստեղծագործությունը: Յուր գժուհությունը թե՛ պալատական բանաստեղծների վիճակից, և թե՛ նրանց շինծու, անարվեստ ու մանավանդ, միայն առատ պարզեների համար գրված փառքն ներբռողների նկատմամբ, նա հիանալի կերպով արտահայտել է հետեւյալ տողերում.

Քանի դեռ կա մի կտոր հաց և մի կում չուր,
Եերեփի պես ամեն անոթ մի՛ մտցնիր ձեռքդ իզուր:

Ապա՝

Նրա համար միայն հեշտ է բառերը դասավորել,
Ով բավարարվում է դատարկ բանաստեղծություններով.
Իսկ նա, ով թանկագին քար է պոկում ժայռից,
Նա միայն ճիգով է գտնում իրեն հարկավոր խոսքը:

Վերջապես, կա նաև մի երկրորդ ննթադրություն՝ պալատական կյանքից նրա խուսափելու պատճառների մասին: Աղբյուրների մեջ աղոտ տեղեկություններ կան այն մասին, որ նիզամին կապեր է ունեցել արհեստավորական «Ալսի» կազմակեպություն հետ: Դա աշխատանքային կոմունայի նման մի կազմակերպու-

մօսւն էր, որի անդամները միացնում էին իրենց վաստակը մի բնաշխանուր գանձարանի մեջ, խիստ բացասական դիրք ունեին թշխանավորների նկատմամբ և պարտավոր էին ապրել իրենց սեփական, աշխատանքով։ Ախիների հայացքների մեջ կային որոշ քննչանուր գծեր սուֆիական-պանթեիստական կրոնափիլիսոփայության հետ. բայց, միևնույն ժամանակ, շատ կարևոր հարցերում նրանք որոշակիորեն հակառակում էին սուփիզմին։ Դրանցից առանձնապես կարևոր է հիշել նրանց վերաբերմունքը բռնության նկատմամբ։ Ինչպես հայտնի է, սուփիներն ընդհանրապես չեղոք դիմք ունեին բռնությունների նկատմամբ։ Նրանք անտարբերություն էին քարոզում հավասարապես և՛ շարի, և՛ բարու նկատմամբ, և իրենց այդ անտարբերությունը հիմնավորում էին իրենց այն սկզբունքով, թե և՛ շարիքը, և՛ բարիքը կատարվում են իրենքներ աստվածային բացարձակ էության թելադրությամբ։ Այսպիսով, սուփիները ու միայն հաշտվում էին դոյրություն ունեցող բռնությունների հետ, այլև ուղղակի արդարացնում էին նրանց գոյությունը։ Մինչդեռ Ախիները նիշտ հակառակ դիրք էին բռնում։ Նրանք ընդունում էին աշխատավորների իրավունքների պաշտպանությունը մինչև իսկ զենքի միջոցով։ Արագ պատմիլ Իբր-Բատուան՝ նկարագրելով Ախիների կյանքն ու վարքը՝ ասում է, թե նրանք տարածված են բոլոր այն երկրներում, որտեղ թուրքական ժողովուրդներ են ապրում. ամբողջ աշխարհում, — ըստ Իբր-Բատուայի խոսքերի, — շեր կարելի գտնել ճանապարհորդների և խեղճերի նկատմամբ ավելի հոգաւար մարդիկ, քան Ախիներն էին նրանք պատրաստ էին անմիջապես թոցնել կեղեքիչ գլուխը և զննքով պաշտպանել խեղճերին։ Բոնության դեմ այսպիսի ակտիվ գործունեությունը Ախիների բնորոշ հատկություններից մեկն է։ Թե Նիզամին իրոք պատկանել է Ախիների կազմակերպությանը, առայժմ եղած սակավ ու աղոտ ակնարկները հնարավորություն չեն ապահու հաստատելու, բայց, եթե նա անձնապես չի էլ պատկանել այդ կազմակերպությանը, ապա՝ նրանց հայացքներից ջատ բան է յուրացը և արտահայտել իր ստեղծագործությունների մեջ։ Այդ բանը մենք կտեսնենք շարադրանքիս հետագա գլուխներում։

Իսկ էլ որ լինի, այդ պատճառներից որն էլ ընդունելու լինեց, — անշուշտ ավելի ճիշտ կլիներ երկուան էլ միասին ընդու-

նու։ — Գաստոց մնում է այն, որ Նիզամին մինչև կյամսքի զերչն էր վառ և մասցել պաղատներից և ընտրել է իր աշխատանքով, թե վարդապետական ու զրկանքների գնով, հաց վաստակելու ու ստեղծագործելու ուղին՝ հավատարիմ մնագով իր այն արտահայտականը, թե՝

Աշխատանքի համար ննք մենք աշխարհ եկել,
Եվ ոչ դատարկ շատախոսության։

Յուր առաջին պոեմը Նիզամին սկսարտել է շուրջ 1176 թվական։ Պոեմը կրում է «Գաղտնիքների գանձարան» (Մախղան ուլ-ասրար) վերագրեց։ Դա, ըստ կառուցքածքի, խորհուրդների ու խրատների մի գիրք է, բաղկացած քանինք գլուխներից, որոնք կոչվում են ոգուցներու։ Դրանցից յուրաքանչյուրը մի պատմիրան է երերի աշխականներին՝ երկրի կառավարման մասին։ Իրեն իր իրատական մտքների ապացույց կամ հիմնավորում, Նիզամին յուրաքանչյուր խրատի կամ պատմիրանի հետ պատմում է որևէ առավ, պատմը վածքը՝ մեծ մասամբ նյութ բաղերով անցյալից, և դրանով իսկ էլ ավելի համոզի դարձնում իր արտահայտած գաղափարները։

Համաձայն Արևելքում ընդունված գրական որադիցիային՝ Նիզամին իր ստեղծագործությունն ուղարկում է ժամանակի տիրակալակին, այն է՝ երգինշանի (Երզնկայի) մելիք Բանեւ-Մանգուչակ Ֆախրինդիկին Բահրամշահին։ Խնչպես պատմում է ոնչ-չուկյան պատմիչներից մեկը, մելիքը շատ է հավանել պոեմը և վատահելի ժարդուած մեծամեծ գանձեր է ուղարկել բանաստեղծին։ Սակայն մի կողմից ոչ մի հիշատակություն լինելը՝ այդպիսի գանձի ստանալու մասին, մյուս կողմից նիզամիի տկնարկներն այն մասին, որ իր ստեղծագործությունները թեև միշտ գովասնքի են արժանացել, բայց ըստ արժանվույն շեն վարձությունների, արևելագետներին այն հավանական կարծիքին են բնորն, որ նթե նույնիսկ Մելիքն իրոք ուղարկել է պարզմներ, ապա, ովուտահելի մարդը տեղ չի հասցրել։

Իր առաջին պոեմի համար Նիզամին վարձառբախեց մի ուղիւցի՝ Գերբենդի տիրակալի կողմից։ Վերջինս իրու պարզեն նրան ու-

1 Արևելագետներից ոմանց կարծիքով առաջին պոեմն ավարտին է 1173—74 թվական։

դարկեց իր ստրկուհիներից մեկին՝ գեղեցկուհի Աֆակին, Բանասահնդն ընդունեց այդ նվերը, բայց պահեց իր մոտ այլևս ոչ իր-քի ստրկուհի, այլ որպես իր օրինավոր կինը։ Թե երբ է տեղի ունեցել այդ ամուսնությունը, առայժմ ստույգ կերպով որոշված չէ։ Համեմայն դեպք այդ պետք է տեղի ունեցած լինի 1174 թվին կամ ավելի շուտ, քանի որ 1174 թվին ծնվել է Նիզամիի միակ որդին՝ Մուհամեդը։ Սակայն ամուսնական երջանիկ կյանքը Նիզամին վայելեց ոչ երկար ժամանակ։ Հավանաբար 1180 թվին, եթե ոչ ավելի շուտ, երբ նա աշխատում էր իր երկրորդ պոեմի՝ մեջարով ու Նիրինից վրա, մահացավ նրա սիրեցյալ կինը, եռոր վիճակը ցնցեց պոետի ամրող էությունը, և նա յուր անսահման տերն իր կնոջ նկատմամբ տեղափոխեց յուր ստեղծագործության հերթունում՝ Շիրինին։ Պետք է ասել, որ Նիզամին ընտանեկան կյանքում ընդհանրապես դժբախտ է եղել Յուր առաջին կնոջը կորցնելուց հետո նա ամուսնացել է երկրորդ, ապա և երրորդ անգամ և միշտ էլ կարճ ժամանակից հետո կորցրել է կնոջը։ Նա ինձը յուր վերջին ստեղծագործության մեջ սուր կերպով նկատում է, թե իր ստեղծագործությունների ավարտումը զուգադիպել է յուր կնոջ մահվան։

Տարօրինակ է իմ բախտը քառեր հյուսելու մեջ...

... երբ ես պատրաստում էի Շիրին-Հալվան,

Դատարկվեց իմ տունը նրանից, ով քաղցրավենի էր

պատրաստում,

Երբ Լելի-գանձի շուրջը պարիսպ էի կանգնեցնում,

Մի այլ գոհար ես պահ տվի այստեղու

Այժմ էլ, երբ հարսանիքը վերջին է հանգում,

Մի այլ հարս ես հանձնեցի Շիրվանին.¹

Զրկվելով կնոջից՝ Նիզամին իր ամրող սերն ու գործուրանը քը կենտրոնացրեց որդու՝ Մուհամեդի վրա, որին և շուտով իր բնեկրն ու խորհրդակիցը դարձեց։

Ավարտելով «Խոսրով ու Շիրին» 1180 թվին, բանաստեղծն

¹ Խոսրով «Խաքանդար Նամեհ» ժամեն է։

² Դրախտի պահապանը։

այս աշարկում է հլոհիգիզիդ էմիր Զհան Փահլեանին, որ հրամանում է հատուցել Նիզամիին արժանի պարզմով։ բայց, ինչպես ցուց ձև տալիս փաստերը, այդ կարգադրությունը պաշտոնյաների նորմեց ի կատար չի ածվել։ Միայն էմիրի մահվանից հետո՝ 1186 թվականին նրա եղբայրը ու հաջորդ Կրզը Արսլանը հիշեց բանաստեղծը և հատկացրեց նրան մի կիսավեր գյուղ, որ ավելի շատ հայտն էր պահանջում տիրոջից, քան եկամուտ բերում։ Ուշագրավ է, որ այդ առթիվ ինքը Նիզամին էլ դառն հեգնանքով նկատում է, թի շահը գիտե, որ բանաստեղծը սակավապես է և ոչ խստապահանց, ուստի և վարձատրել է նրան ոիր պահանջմունքների համապատասխան։ Տիրություն արել է Նիզամին այդ գյուղին, որ կոշտում էր Համբունիան, թե ոչ, և ո՞ր շափով նա եկամուտ է բերել բանաստեղծին, հայտնի չէ։ այսուամենայնիվ, իր իսկ Նիզամիի հետագա ստեղծագործություններում արտահայտված տրուուջը հատատում է, որ դրանից հետո էլ նրա տնտեսական դրությունը չի բարեխավվել։

«Խոսրով ու Շիրին» պոեմն ավելի մեծ ընդունելություն գտավ. Նիզամիի համբավը հոչակից ամրող երկրում։ Եվ, ահա, 1188 թվին Շամախու շիրվանշահ Ակրսիթանը հատուկ սուրբանդակի միջոցով պատվիրում է բանաստեղծին գրել իր համար մի նոր պոեմ և առաջարկում է նաև թեման, որ է արաբական ավանդությունը և լիի ու Մեղնումի դժբախտ սիրո մասին։ Բանաստեղծը, որ նախապես չեր ախորժում այդ թեմայից, իր որդու հորդորանքներով հանձն է առնում պատվերը և ոչ ավելի քան շորս ամսում ավարտում յուր նոր ստեղծագործությունը, որ շուտով շտեմնված հուակի է արժանանում ամրող մահմեդական Արևելքում։ Պոեմն աներևակայիլի ժողովրդականություն ստացավ ոչ միայն Աղրբեշանում, այլև ամրող Առաջավոր Արևելքում և դարձավ հետագայի շատ ու շատ բանաստեղծների ազդեցության ու նմանության առաջնակարգ աղբյուրներից մեկը։

1196 թվին Նիզամին նոր պատվեր է ստանում Մարաղայի տիրակալ Քորփա-Արսւանից. վերջինս դիմում էր բանաստեղծին, որպեսզի մի նոր ստեղծագործությամբ անմահացնի նաև իր մանունը Նիզամին այս անդամ էլ դիմեց պարսկական ժամանակադրությանը և իբրև թեմա ընտրեց սասանյան Բահրամ Գուր արքայի պատմությունը։ Նույն թվի հուլիսին իսկ նա ավարտեց իր նոր

պոեմը, որ կրում էր «Յոթ գեղեցկուհիներ» (կամ՝ Յոթ պատկերներ)՝ վերնագիրը:

Նիզամիի կյանքի հետագա տարիների մասին այլևս տեղեկություններ չունենք: «Յոթ գեղեցկուհիներից» հետո նա գրել է իր վերջին պոեմը՝ «Էսքանդար-Նամին» (Դիրք Ալեքսանդրի մասին): բայց թե երբ է ամարտել այն, հայտնի չլի: Բանաստեղծն առում է, որ այդ ստեղծագործության վրա աշխատելու ժամանակ լրացել է որդու 17 տարին, որ համընկնում է 1191 թվին: բայց դա կարող էր աշխատանքի սկիզբը լինել և, ամենայն հավանականությամբ, այդպես էլ է: Իսկ այդ նշանակում է, թե Նիզամին «Էսքանդար-Նամին» վրա աշխատել սկսել է շատ ավելի վաղ, քան «Յոթ գեղեցկուհիների» վրա:

Իր կյանքի վերջին տարիներում Նիզամին շատ ավելի ծանր օրեր է ապրել: Իր առանց այն էլ ոչ բարենպաստ տնտեսական կացությունն էլ ավելի ծանրացել է երկրաշարժի շնորհիվ, որին նկարագրությունը տալիս է նա իր վերջին ստեղծագործության մեջ: Իր կրած զրկանքների մասին բանաստեղծն առանձնապես շատ է գանգատվում վերջին պոեմում:

Ճշտված չեն նաև Նիզամիի մահվան թիվը, Առայժմ՝ հավանական են համարում, որ նա մեռել է 1203 թվին: Նիզամիի հայրենակիցները, որոնք, ի գեմա նրա, տեսնում էին իրենց իմաստուն խորհրդատուին, օգնականին ու պաշտպանին, թաղել են նրան մեծ շուրջով: Նրա գերեզմանի վրա կանգնեցրել են արձան, որ կանգուն է եղել մինչև 19-րդ դարի սկզբները, ժողովողի հիշողության մեջ Նիզամին մնացել է իրեւ ժողովրդի շահերի արդար պաշտպան, իրեւ սուլթան, և ժողովուրդը նրա շիրիմը դարձրած է եղել ուխտատեղի: Աղրբեջանական ժողովուրդն այժմ նոր, հակայական հռչարձան է կանգնեցրել բանաստեղծի հայրենի բաղաքում՝ Կիրովագրում:

¹ Բնագրում վերնագրված է «Հաֆթ փեյքար» պարսկերեն փեյքար բառը՝ նշանակում է և՛ պատկեր, և՛ պեղեցկաւեր: Երկու իմաստն էլ համապատասխանում են պոեմի բավանդակաւությանը: Հավանական է, որ հենց այդ էլ նկատք ունենալով հեղինակն ընտեղել է այդ երկիմաստ բառը:

ՆԻԶԱՄԻԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Նիզամիի հիշալ հինգ պոեմները կազմում են մի ժողովածու, որ կրում է «Ըստամսե» (Հնդյակ) ընդհանուր վերնագիրը: Բացի դրանքից հեղինակն իրեւ ժառանգություն է թողել նաև քնարական բանաստեղծությունների մի ժողովածու (Դիվան), որ, սակայն, ամբողջությամբ չի հասել մեզ: Թեև Նիզամիի քնարական բանաստեղծությունները ևս, ինչպես կտեսնենք ստորև, գեղարվեստորեն բարձրարժեք ստեղծագործություններ են, սակայն նա իր բանաստեղծական փառքը նվաճել է հիշյալ հինգ պոեմներով: Այդ պոեմները Նիզամին ինքը չի միացրել մի ժողովածուի մեջ, արևելագետները պարզել են, որ այդ կատարված է մոտավորապես տառենքքրորդ դարում՝ անհայտ խմբագիր-արտագրողի կողմից: Վերշնին է պատկանում նաև «Խամսե» խորագիրը: Համենայն դեպք, հինգ պոեմների միացումը մի ժողովածուի մեջ Խամսե վերնագրով՝ Արևելքի մահմեդական ժողովուրդների գրամկանության սրբագործված տրադիցիաներից մեկը դարձավ Նիզամիի այդ ժողովածուի շնորհիվ: Ճիշտ է, հետաքայում որոշ բանաստեղծներ՝ դարձյալ այդ տրադիցիաներին հետևելով՝ մի ժողովածուի մեջ միացրել են ոչ թե հինգ, այլ յոթ պոեմներ (Յոթնյակ), սակայն այդ առանձնապես հաջողություն չի ունեցել, և մինչև 18-րդ դարն էլ գերազանցապես տարածված է եղել հնդյակը:

Նիզամիի «Ըստամսե» մեջ պարունակվող այդ հինգ պոեմների միջև թե՛ սյունետի, և թե՛ կառուցվածքի ու տաղաշափության տեսակետից որևէ ընդհանուր բան չկա: Ընդհակառակին, նրանք իրարից շափազանց տարբեր են և՛ թեմատիկայով, և՛ կառուցվածքով: Սակայն, նախքան այդ առանձնագործությունների վերլուծության անցնելը, անհրաժեշտ ենք համարում համառոտակի ծանոթացնել ընթերցողին նրանցից յուրաքանչյուրի բովանդակության հետ:

Գաղտնիների գանձարան: — Խնչպես ասել ենք, Նիզամիի առաջին ստեղծագործությունը կրում է դիդակտիկական քնուկթյունի մի ընդհանուր թիմա, այլ բաղկացած է քսանհինք պատուցներից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է Նիզամիի հայացքները՝ կյանքի այս կամ այն երկույթի մասին և նրա խըստաները այդ առթիվ: Ստեղծագործությունն սկսվում է ներածական գլուխներով՝ ակյա գիրքը կազմելու և նրա արժանիքների մա-

սին», «եկուսքի առավելությունների մասին»), «Դիմում աստծուն և աղին: Ռւշագրավ է, որ նույնիսկ աստծուն դիմելիս ու նրան նկարագրելիս էլ նիզամին արտահայտում է յուր քաղաքական հայրացքները. աստծուն նա չի ներկայացնում իրու վերացական, ինչ-որ մի բացարձակ էություն, այլ գնում է նրա մեջ մարդկային հատկանիշներ, և, որ առանձնապես կարևոր է, ներկայացնում է նրան իրու աշխատավորների պաշտպան: Հենց այդտեղից ելնելով է նա գանդատփում է աստծուն բռնականներից ու կեղերիններից, ասելով: «Ո՞նիր ինձ, չէ» որ մենք զուրկ ենք արդար գատավորից. եթե դուքներ գանես, էլ ո՞ւմ դիմենք մենք... Կրծատիր (նրանց) վարձը, որովհետև նրանք շատ են պահանջում, դու վերցրու (նրանց) բաժինը, որովհետև նրանք կողոպտիչներ են: Այս ներածական գուշներին հաջորդում են բռն զրուցները, որոնք զանազան բռնդրափություն ունեն: Ամեն մի զրուցի տիպով, որպես մոռքը, նիզամին շարագրում է իր սկզբունքները տվյալ զրուցի առանցքը կազմող երևույթի մասին, դրանով, կարծես, տեսականորեն նախապատրաստերով ընթերցողին, ապա պատմում է որևէ առակ կամ պատմվածք՝ այդ տեսական շարադրանքի ոգուն համապատասխան: Գրքի այսպիսի կառուցվածքը առիթ է տվել եվրոպական բուրժուական արևելագետներին այս ստեղծագործությունը համարելու գեղարվեստորեն թույլ գործ: Առաջ այդ արևելագետներն իրենց այդպիսի գնահատականի համար շափանիշ են ընդունել բուրժուականի ճաշակը, նրականում դա մի մեծարժեք ստեղծագործություն է և արժանի ավելի մեծ ուշագրության, քան այն, որին արժանացել է մինչև այժմ: Ինարկե, հենց այն հանգամանքը, որ նա շունի մի ընդհանուր թեմա, հայտնի շափով դժվարացրել է բանաստեղծի գործը. դրան ավելացել է նաև այն, որ նա իրեն նպատակ չի դրել այդ առաջին գրքում հյուսել սիրային ոռմանտեկական մի պատմություն, կամ մի դյուցազննվեա: Նա այդ ստեղծագործությամբ կամեցել է գեղարվեստորեն արտահայտել իր փելիստիկական, բարոյագիտական հայացքները: Իսկ այդ նշանակում է, որ ստեղծագործության ամբողջությունն ու միասնականությունը հիմնված է ոչ թե թեմայի, այլ այդ փելիստիկայական-բարոյագիտական, հայացքների ամբողջ սիստեմի վրա: Հենց այս հանգամանքները, էլ երկորդ, ավելի լուրջ դժվարությունն էր հանդիսանալը. Հեշտ չէ բանաստեղծական խորոշությունը ստեղծագործությունը առաջանալը:

Հարացրեն մի ամբողջ փելիստիկայություն: Իսկ նիզամին շաբանաց վարպետորեն կարողացել է կատարել արդ հենց այս է, որ բուրժուական արևելագետները չեն ուզում տեսնել: Բացի դրանից, բուրժուական արևելագետները փորձում են դարձյալ նսեմացնել այդ երկի արժեքը նաև բովանդակության տեսակետից: Նրանք աշխատում են ցույց տալ, որ «Գաղտնիքների գանձարանը» միսթիկական բնույթ կրող երկ է, որ նրա մեջ արտահայտված փելիստիկայությունն է: Բայց այս ժամանեցումը միանգամայն սխալ է և ցայտում կերպով ցույց է տալ բուրժուական արևելագետների մի հայտնի տեսնդինը: Այդ արևելագետները շատ բանաստեղծների են հոչակել իրեն սուսպիրանաստեղծների, կամ մենալով սրողներ, մթագներ նրանց ստեղծագործություններում արտահայտված առաջավոր գաղափարները, կամ մենալով նրանց սոցիալական բողոքը «մեկնաբանել» իրեն սուֆիական հրաժարական աշխարհիկ կյանքից: Այդպիս են վարպել նրանք Սմարտ հայածի բառյակների հետ, այդպիս վարպել են Հայունի գեմոկրատ, բանաստեղծ-պրոպագանիստ Նասիրի Խոսրովի ստեղծագործությունների հետ, այդպիս են վարպել նաև նիզամին այս պոմամի հետ: Համարել արդ ստեղծագործությունը գնդարվեստորեն թույլ, իսկ բովանդակությամբ էլ միսթիկական և դրանով իսկ արժեքազրկել արն, թույլ շտալ, որ նրանում արտահայտված սոցիալական բողոքը հասնի մասսաներին, բողարկել այդ բողոքը և մեկնաբանել այն սուփիզմին հատուկ այլարանություններով, — ահա բուրժուական արևելագետների նպատակը: Մինչդեռ սովորական արևելագիտությունը, որ, զինված մաքսւանին անդաման փելիստիկայությամբ, կարողանում է ճշտորեն հասկանալ ու զնարաւութել երևույթները, ճիշա կերպով հասկանում է նիզամուն, մին հանում այդ ստեղծագործության մեջ արտահայտված սոցիալական բողոքը և դրանով իսկ մերկացնում բուրժուական արևելագետության այդ հակագիտական վնասակար տեսնդինը: Որ նիզամին այդ ստեղծագործության մեջ հիմնականը հենց սոցիալական բողոքն է, բողոքը՝ կեղերումների, բռնությունների ու շահագործման դեմ, կարելի է ցույց տալ մի քանի զրուցների համերձ բովանդակությունը շարադրելով: Այսպիս, «Նուշիրվանի» և իր փելիստիկային պատմվածքում է, թե մի անգամ Սասանյան Խորրով Անուշիրվանի թագավորը որսորդությունը

ժամանակ հեռացել էր թիկնապահ խմբից։ Նրան հետևում էր ծի-
ախ իր վեզիրը։ Իրենց ճանապարհին արքան ու վեզիրը հասեամ
են մի ավերված գյուղի։ Շուրջն ամեն ինչ դատարկ էր, ամենու-
րեք բարձրանում էին կործանված տների փլատակները։ Հկար ու
կյանք, ո՞չ մարդ։ Միայն մի կիսավեր պատի վրա նստած էին եր-
կու բու, որոնք ինչ որ բանի մասին ողևորությամբ խոսում էին։
Յունիքի բարձր ճիշը, որ լսվում էր այդ ավերակների միջից, ասք-
առու ազդեց արքայի վրա և միաժամանակ շարժեց նրա հետաքըր-
քրությունը։ «Ինչի՞ մասին են խոսում նրանք», — հարցրեց արքան։
Վեզիրին։ Պարզվեց, որ նրանցից մեկն իր աղջկան կնության է
տալիս մյուսին և իբրև հաստուցում նրանից պահանջում է այդ ա-
վերված գյուղն ու շրջակայիքի մի քանի այդպիսի գյուղեր։ Մյուսը
պատասխանում է, թե ինքը հաճուքով կարող է տալ այդ ավե-
րակները և ավելացնել դրան հարյուր հազարավոր այդպիսի աշխ-
ակներ, որովհետև քանի գեղ կենդանի է Խոսրով Անուշիրվանը,
ժողովորդը կմնա թշվառության մեջ և շատ ու շատ գյուղեր դնու
կավերվեն։ Այդ խոսքերը խորապես ներգործում են Անուշիրվանի
վրա։ Նա այնուհետև վերջ է տալիս բռնություններին և կառավա-
րում է երկիրն արդարությամբ ու բարությամբ։

Գրեթե նույնպիսի բռվանդակություն ունի նաև «Սուլթան»
Սանչարի և պառավի մասին» պատմվածքը, բայց սրա մեջ բո-
ղոքը բռնությունների ու կեղեքումների դեմ արտահայտված է ա-
վելի սուր կերպով։ Նիզամին պատմում է, որ մի պառավ կին գա-
շխ է սելջուկյան սովորան Սանչարի մոտ և նրան բողոքում իրեն
հասցրած տանջանքների ու նեղությունների մասին։ Ամբողջ պատ-
մքածքը, բացառությամբ մի քանի երկուդից, պարունակում է
սովորանի ու նրա պաշտոններության անիրավությունների, կեղե-
քումների ու բռնությունների թվարկումը, որ առանց վախճառչու-
սով առջև կատարում է պառավը։

Ես, — ասում է պառավը սովորանին, — քո մեջ չեմ տեսնում
արդարադատության պատկը.
Ես չեմ տեսնում կեղերման վերջը,
Թագավորը պետք է ժողովրդին ապավեն լինի,
Իսկ դու գողի պես կեղեքում ես ժողովրդին։

Դու ստրուկ ես, թեկուզ և արքայական զգեատ ես հագել,
Մեզ թագավոր ես դու, որ վնաս իս հասցնում ժողովրդին։
Դու թեե տակնուվուա ես արել աշխարհը,
Պայց ի՞նչ ճերոսությամբ ես աշքի ընկել գու...»

Զայրացած պառավը հիշում է սովորանի բոլոր շարագործու-
թյունները և խորհուրդ է տալիս նրան հրաժարվել բռնություննե-
րը և կառավարել երկիրը արդարությամբ։ Բայց՝

Նորասանի տիրակալ Սանչարը շանսաց
Այդ իմաստուն խոսքերին և կորցրեց երկիրը։
Եվ այժմ երկրի վրա արդարություն չկա,
Թրոնիր այն միայն Սիմուրդ¹ թիվ վրա։
Եվ ամոթն է մոռացված կապուտ երկնի տակ,
Եվ պատիվը՝ որպես ծուխ՝ այս հոգագողի վրա։
Եեր կաց, նիզամի, և լացի՛ր ամոթից,
Արյուն լացի՛ր նրանց վրա, ում համար արյունը շաւը է։

Այսպիս է եզրափակում հեղինակը այդ պատմվածքը։
Մի երրորդ պատմվածքի՝ «Բանակալ թագավորի և արդար
ճկնավորի մասին» պատմվածքի մեջ հետևյալն է պատմում։ Հաշ-
շաց անունով մի թագավոր կար, որ բռնությամբ նեղում էր ժողո-
վորդին ու կեղեքում անսանձ։ Մի օր գալիս է նրա մոտ մի մարդ,
որն իմանդում էր ամեն գաղտնիք, և հայտնում, թե այսինչ ճգնա-
վորը թագավորին բռնակալ է անվանել։ Թագավորն անմիջապես
հրամայում է կանչել ճգնավորին։ Դահիճը պատրաստություն է
տեսնում նրան գլխատելու։ Դալիս է ճգնավորը, Թագավորը նրան
հարցնում է, թե ճի՞շտ է արդյոք, որ նա իրեն բռնակալ է անվա-
նել։

«Ասել եմ, որ դու ինձ գեւ ես ասել,
Հաստատել ես, որ անմեղներին սպանել եմ, — ասում է
Թագավորը։

¹ Առաջնական թագուհի։

Դու գիտես, որ իմ թագավորությունը նման է Առջոմոնի
թագավորությանը,

Ինչո՞ւ ուրեմն ինձ դմբանակալ ևս կոշումք

Սերուկն առանց երկյուղ կրիզու հաստատում է, որ իրոք ինքը
կոչել է նրան բռնակալ, և այդ՝ այդպիս.

... Ես շեմ քննել.

Ես ավելին եմ ասել, քան այդ խոսքերը:

Դու ամոթ շունես փոքրերի ու մեծերի առջև,

Դու կողոպտում ես զյուղերը, կեղեքում քաղաքները:

Ես նա եմ, որ հաշվել է քո շարիքները,

Զարի ու բարու մեջ քո հայելին եմ եղել:

Դու նրա (Հայելու) մեջ անդրադարձել ես աթեակն,
ինչպես կայում է... Կայում կայում է...

Զարդի այդ հայելին, մեծ պատիվ չէ:

Ես արդար եմ, հասկացի՛ր իմ խոսքերի ճշտությունը,

Իսկ թե կախել ես ուզում, ես պատրաստ եմ մահման։

Բռնակալ թագավորը հասկանում է ճպառվորի խոսքերի ճշշ-
ճարտությունը և հրամայում է մեծամեծ պատիքների արժանացը-
նել նրան՝ գլխատելու փոխարեն, իսկ ինքը այսուհետեւ կառավա-
րում է երկիրը արդարությամբ։

Կարելի է դարձյալ պատմվածքներ մեջ բերել, որոնց մեջ Նե-
պամին սուր կերպով քննադատում է տիրող անարդարությունները։
Թայց մենք բավականանում ենք այսքանով։

Եթե մի կողմից հեղինակը քննադատում է բռնակալներին,
մերկացնում նրանց բռնություններն ու անարդարությունները, տ-
պաս, մյուս կողմից, նա հակադրում է դրանց իրենց աշխատանքուն
ապրող մարդկանց։ Այսպես, օրինակ, «Երկրագործի և Սուկերմանի
մասին» պատմվածքում նա պատմում է, թե մի օր Սուկերմանը
(Սողոմոնը) դաշտում տեսնում է մի ծերունի հողագործի, որ իր
տնից մի բուռ ցորին հավաքած ցանում է հողում։ Սողոմոնը
թունի բարանով հարցնում է նրան, թե ինչո՞ւ է ցորենը ցանում
այնպիսի հողում, որտեղ չուր չկա։ Մերունին պատասխանում է,
թե ինքը հողից ու ջրից օգնություն չի ինդում, իր շուկար՝ իր թը-
տինքն է։ «Օս չեմ մտածում թագավորության և իշխանության ծա-

ռում՝ առամ է նա, — քանի կենդանի եմ, բավական է ինձ առա-
նացը։

Նույնպիսի բովանդակություն ունի նաև «Մեր աղյուսագործի-
նաման» պատմվածքը. մեկը հանդիմանում է աղյուսագործին այն
ամայի համար, որ նա անարդ աշխատանքով է զբաղվում, ամբազք
ուր գործ ունի միայն ցեխի հետ։ Աղյուսագործը պատասխանում է, որ
ինքը հպարտ է նրանով, որ իր աշխատանքով է ապրում։ «Ես
կայ համար եմ աշխատանքին մեկնում ձեռքերս, որպեսզի ձեռք
ըստ շարակառեմ» ողորմության համար։

Վերը հիշված պատմվածքները բավական են արդեն համոզ-
վելու համար, թե «Գաղտնիքների գանձարանը» մի միստիկ-սու-
բիստական երկ չէ։ Նրա մեջ հեղինակը շատ որոշակի և գործնական
նպատակ է դրեւ. ցույց տալով տիրապալների բռնություններն ու
ամիրավորումները և հակաբրեխով դրանց արդարությունն ու բա-
րձրությունը՝ խրատել հենց իր իսկ ժամանակի ամբականերին։
Այս նպատակին հետամուս լինելով է՝ նա անողոք կերպով մեր-
կացնում է հասարակական կյանքի շարիքները, անխնա կերպով
առաջընթաց անցյալի և իր ժամանակի թագավորներին՝ անսանձ կա-
շարականությունների ու կեղեքներն համար։ Այս է, աճա, «Գաղտն-
իքների գանձարանի» արժանիքը, որ շնու ուզում տեսնել բուրժու-
ական էսթետները և ոչ միայն շնու ուզում տեսնել, այլև աշխա-
ռում են բողարկել։

Այսպիսով «Գաղտնիքների գանձարանը» մի մեծարժեք գե-
ղարվեստական երկ է, որի հիմնական արժանիքը հենց այն քննա-
դատական ոգին է, որով դիտում ու պատկերում է իրականությու-
նը։ Նրա գեղարվեստական արժանիքն մեծապես նպաստում են
շեղվի հարստությունն ու պատկերների ճոխությունը։ Անշուշտ, ե-
թե այդ ստեղծագործության լեզուն համեմատենենք, օրինակ, Շեռ-
ովկ ու Երիբնից լեզվի հետ, ապա՝ կնքատենք որոշ բարդություն-
իքների բառերի գործածություն և համեմատությունների որոշ վե-
ռացականություն։ Բայց այդ արդյունք է հենց ստեղծագործու-
թյան բնույթի։ Ինչ խոսք, որ փիլիսոփայական դատողությունները,
խօսեն ու գաղափարները շափած իւստի ենթարկելու այնքան էլ
հնաց բան չէ. ինչպիս կարելի է այդ դիդակտիկական ստեղծա-
գործության արժանիքը գնահատել սիրային-ոռմանտիկական վե-
պի շափանիշով։ Հենց միայն փիլիսոփայական բազմաթիվ տեր-

մինները բավական են, որ եթէի լեզուն գեղարվեստական պարզ պրական լեզվից վերածվի բարդ, դժվար հասկանալի բառերով ու պատկերներով ծանրաբեռնված լեզվի։ Բայց դա տվյալ դեպքում չէ կարելի դիմել իրեւ բացասական մի բան. դա բիում է հենց երկի հոգուց և, հետևաբար, տվյալ դեպքում նպաստավոր հանգամանք է, որովհետև պայմանավորված է երկի բովանդակությամբ։

Խոսրով ու Շիրին։— Այս պոեմն, ինչպես ասել ենք, սիրային-սոմանտիկական վիպերգ է. նրա նյութը քաղված է իրանի պատմությունից։ Իրեւ աղբյուր նիշամին անշուշտ առաջին հերթին սորովործել է պարսից թագավորների ժամանակագրությունը, բայց մեծ շափով նյութ է քաղել նաև ժողովրդական ավանդություններից, հատկապես «Քասրի Շիրին ու Բիսություն»-ից (Շիրինի և Բիսությունի պատմությունը)։ Վիպերգի համառոտ բովանդակությունը հետևյալն է։

Սասանյան Հորմուդ (Որմիզդ) արքան ունենում է մի տղա՝ Խոսրովին, որ պատմության մեջ հայտնի է Խոսրով Փարվիզ անունով։ Հայրը անսահմանորեն սիրում է որդուն և, շինայելով նրան ոչինչ, միաժամանակ ամեն շանք գործադրում է որդուն արդարության ու բարության ոգով դաստիարակելու համար։ Նա նույնիսկ խստորեն պատժում է դրդուն՝ գյուղացիների նկատմամբ թուլ տված անիրավության համար։

Երիտասարդ արքայազնի շքախմբի մեջ էր մեծարվեստ նկարի Շափուրը, որ մի աշխարհ տեսած մարդ էր և շատ հետաքրքիր պատմություններ էր պատմում իր տիրոջը։ Մի անգամ էլ նա պատմում է, թե Կասպիական ծովափի լեռնաստանում կա մի թագուհի, որի անունն է Շամիրա, բայց հպատակները կոչում են նրան Միհին-բանու (Մեծ տիկին)։ Նրա մոտ է լինում իր ազգականուհի Շիրինը, որի նման գեղեցիկունի աշխարհում չկա։ Երիտասարդ արքայազնի սրտում այդ պատմությունը խոր արձատներ է ձգում և նա թախծում է Շիրինի մասին։ Ի վերջո, նա հանձնարարում է Շափուրին՝ զնալ Հայաստան, գտնել Շիրինին և բերել նրան։ Այդ դժվար գործը կատարելու համար Շափուրը հույսը դրհում է իր արվեստի վրա և դիմում է դեպի Հայաստան։ Նա նկարում է Խոսրովի պատկերը յուր արվեստի ամբողջ վարպետությամբ։ Հայաստանում իմանալով, թե որտեղ է գտնվում Շիրինը արդ պահպանին և ամրոցը կառուցել տալիս մարդկային բնակությունից հեռու մի կիրճում։

Այսպէս Շիրինի առջև նկարը ցանկալի ազդեցություն է ունենալ օրիորդի վրա. զրանից բաջակերպած Շափուրը թուլտվություն է խնդրում օրիորդից՝ նրա մոտ գնալու Գնալով նրա մոտ՝ նա պատմում է Խոսրովի սիրու ու տառապանքների մասին։ Շիրինը նույնպես վառակ է սիրով և, առանց այլևս ժամանակ կորցնելու, իր արագավազ Շարդիզ ձին նստած՝ սլանում դեպի իրան։

Այդ միջոցին, Խոսրովի թշնամիները կարողացել էին նրա հոռոված այն աստիճան գրգռել որդու գեմ, որ արքայազնն ստիպված էր վախուսատի դիմել՝ հոր զարուցիթից ազատվելու համար։ Նա էլ ովհում է զեպի Հայաստան։ Ճանապարհին նա հանդիպում է մի առջյուրի, հենց այն ժամանակ, երբ շոգից տանջված Շիրինը՝ հանապարհորդի շապասելով՝ լողանում էր նրա մեջ Խոսրովը շի հանաշում իր սիրածին, որի զեմքը ծածկված էր արծակած մազերով։ Շիրինը նույնպես շի ճանաչում Խոսրովին, բայց հմայվում է նրա գնդեցկությամբ, թեև նա դատապարտում է իրեն ու զարմանում, թե ինչպես միաժամանակ ինքը կարող է սիրել երկու տղամարդուն Արդարական էլ նրանք, առանց իրար ճանաչելու, հեռանում են միհյանց։

Հասնելով Մեղամին՝ Խոսրովի հայրինի քաղաքը՝ Շիրինը անեկանում է, որ Խոսրովն այսանդ չէ, բայց քանի որ Խոսրովը մեկնելուց առաջ հրամայել էր իր սարկուհիներին պահել Շիրինին իրենց մոտ, Շիրինը համաձայնում է դրան և մնում այնտեղ։

Խոսրովը համում է Հայաստան և լավ ընդունելություն է գտնում Շիրինի անհետացումից վշտացած Միհին-Բանուի մոտ։ Վերջինս առաջարկում է Խոսրովին ձմեռն անցկացնել իր մոտ՝ Բիրդա մայրաքաղաքում։

Հայրենիքից հեռու ստրկուհիների ընկերակցությամբ Շիրինը երկար ժամանակ շի կարողանում ապրել. շուտով նա ձանձրույթ է դրսում. դրան ամենառաջ է նաև այն, որ Մեղամինի կիման նույնպես վիսասակար է ազգում նրա առողջության վրա։ Նա պահանջում է կառուցել իր համար մի ամրոց լեռնային շրջանում։ Նրան խանդող ստրկուհիները կաշառում են ճարտարապետին և ամրոցը կառուցել տալիս մարդկային բնակությունից հեռու մի կիրճում։

Շափուրի միջոցով իմանալով Շիրինի տեղը՝ Խոսրովն ուղարկում է Շափուրին նրան երեք բերնուու։ Բայց հենց այդ միջոցին Հայրենի երկրի գեապերն ստիպում են նրան վերադառնալ Մեղա-

ինս նա լուր է ստանում, որ հայրե մահացել է, ու շտապում է զաշ-
հը ժառանգելու, և երբ Շիրինը գալիս է Թերդա, նա այլա այնտեղ
չէր իրանում Խոսրովի գործերը բարզանում են. Ֆեռդանինը, ո-
րոնք մինչև այդ էլ չէին սիրու նրան, Բահրամ Չուրինի գլխավա-
րությամբ ապատամբում են: Խոսրովի ստիպված է լինում փախչել.
Հայրենի երկրից և ապաստան գտնել Բերդայում: Վերջապես երկու
Կանաչ դրանկ: — Ռուսական արքայադուստրը սիրումում է Հայելյալը: Ռուսաց երկրում մի շքաղ արքայադուստր է լինում: Ի անսահման գեղեցկության հետ նա ուներ խորաթափանց միտք՝ բազմակողմանի ընդունակություններ: Նա լիովին յուրացնում է շետության բոլոր ձյուղերը, այդ թվում՝ նաև հմայութիւն արվեստը: Նրա գեղեցկության համբավը շուտով տարածվում է աշխարհի բոլոր ժամերում, և ամենահեռավոր երկրներից անգամ անվանի առաջնություն գտնի են նրա ձեռքելու: Սակայն արքայադուստրը չի կամենում նույնիսկ խոսի նրանց հետ: Նոր թուլլտվությամբ նա կառուցել է տալիս մի կափարդական ամրոց լեռնաշխարհում և փակվել այնտեղ: Ամրոցն ուներ միայն զաղանի ձուռք: Հորս կողմից նա ջրապատված էր բարձր պարիսպներով: Հորսն պահապան էին բազմաթիվ խորհրդավոր արձանները, որոնք առնուվ թողնում էին ամրոցի ներսը թափանցել փորձող ինգանիների գործիքը: Արքայադուստրը նկարել է տալիս իր պատկերը և առ տակ գրում այն պայմանները, որոնք կատարողը կարող է անունանակ նրա հետ: Այդ պայմաններն էին, իր հետ ամուսնանու կամեցողը պատր է լուծեր բոլոր գաղտնի թալիսմանների զուտթյունը, զաներ զաղտնի մուտքը, թափանցեր ամրոցի ներսը, ունենալու այն բոլոր առեղծվածները, որ կառաջարկեր ինը՝ արքայադուստրը: Այդ բոլորից հետո միայն նա կհամաձայնեց անունանակ խիզախ ասպետի հետ: Իր պատկերը և այդ առաջնությունը պարունակող հայտարարությունը՝ կախված էին քաղաքներուց:

դարբաների վրա: Հարյուրավոր ու հազարավոր հերոսներ, գեղած լրեադ գեղեցկունու պատկերով, խիզախեցին իրենց բախտությունների, սակայն բոլորն էլ ամրոցի խորհրդավոր պահապանների սրբերին զահ դարձան: Զահվածների գլուխները կախվում էին ամրոցի պարիսպներից, որոնք կարճ ժամանակից հետո ծածկվեցին մարդկացին զանգերով:

Հերթը համուռմ է մի պատանի շահզարի: Որոշելով անպատմանորեն համեմ իր նպատակին՝ շահզարին մի նկարչի մոտ առվորում է բոլոր կախարդական գիտությունները: Այդ բոլորը յուրացնելուց հետո միայն՝ նա, բոլոր զոհվածների վրեժը լուծելու և արքայադատեր հետ ամուսնանալու վճռական որոշումով, հագնելով կարմիր զգեստներ՝ դիմում է դեպի անառիկ ամրոցը, իր սավորած գիտությունների շնորհիվ նա հաղթահարում է բոլոր դժվարությունները, չեղոքացնում խորհրդավոր պահապանների զորությունը, մտնում ամրոցի ներսը և ճշտորեն լուծում արքայադատեր առաջարկած առեղծվածները: Արքայադուստրը գտնում է վերշապես իր ցանկացած փեսացուին և հմայված նրա քաջությամբ, խելովությամբ ու գեղեցկությամբ, տալիս է իր համաձայնությունը՝ նրա հետ ամուսնանալու մասին: Անմիջապես կատարվում է հարսանիքը: շահզարին, ի նշան իր երջանկության ու հաղթանակի այնուհետև հագնում է միայն կարմիր զգեստներ:

Պատմվածքը վերջանում է կարմիր գույնի փառաբանությամբ, որ գեղեցկության ու երջանկության սազական գույնն է: այդ փառաբանությունը հավելվում է բոսորագույն արշալուսի հակիքն նկարագրությամբ:

Փիրուզագույն դդյակ.— Մաղրիբյան արքայադուստրը պատմում է, թե նզիպոտում Մախան անունով մի վաճառական է թենում: Մի օր, իրիկնամուտին, երր նա, իր ընկերներով շրջապատված զրոսնում էր պարտեզում, նրա մոտ է գալիս յուր առևտուկան ընկերը և հայտնում, թե մեծագին ապրանքներով ու գանձերով բեռնավորված՝ նրա քարավանը ժամանել է: Ընկերոջ ուղեկցությամբ Մախանը դիմում է դեպի քաղաքի դարբաները, բայց երբ համում են այնտեղ, պարզվում է, որ դարբաններն արդեն փակվել են, որովհետև արեւ մայր էր մտել. իսկ քաղաքի օրենքների համաձայն՝ արևի մայրամուտից հետո դարբանները բացելու հրավումք չկար: Մախանը որոշում է սպասել մինչև առաջա-

բայց ընկերը չի համաձայնում և խորհուրդ է տալիս ծպտյալ կերպով գորս գալ քաղաքից, քենուերը գիշերն իսկ տեղափոխել քառար և այլպիսով իսկ ազատվել մաքս վճարելուց: Մախանը համաձայնում է և հետեւում է ուղեկցին: Գորս գալով քաղաքից՝ ընկերը նրան առաջնորդում է դեպի ինչ-որ անապատ և, կանչելով նրան իր հետեւից՝ հանկարծ թաքնվում: Մեն-մենակ մնալով անպատում՝ նա ճանապարհ է որոնում դեպի քաղաք, բայց նրա առջևն են ենում սարսափելի գաղաններ, մարդակերներ ու հրեշներ: Գերմարդկային ճիգերով հաղթահարելով բոլոր դժվարությունները և ազատվելով գիշատինների ձեռքից՝ նա վերջապես համում է մի այգի: Փարմամ բուսականությամբ ճոխացած հրաշալի այդում նույնում է ամեն տեսակ մրգեր և սառնորակ ջուր թայց հնաց ու նա, իր երկար տանջանքներից հետո, սկսում է ճաշակել մրգերը, վրա է համուռմ մահակով զինված պահապանը: Մախանին հարզվում է պատմել պահապանին իր դժվարաց հանապարհությամբ ու արքածների մասին: Ժեր այգեպանը ցալվակցում է նրան և թույլ է տալիս մնայ այգում, այն պայմանով միայն, որ նա մերսոյ գիշերն անց կացնի ծառի վրա և ինչ էլ որ տեսնի, ծառից մնանի: Մախանը բարձրանում է գիշերելու համար իրեն ցուց անած ծառի վրա և ուզում է բնել: Բայց խավարն ընկնելու պես պարտեզը լցվում է շրմադակեղ աղջիկներով: Նրանը խրախճանք և սարքում հնաց այն ծառի տակ, որի վրա պետք է գիշերեր ինքը լուսոր աղջիկներին գլխավորում է հրեշտակային գեղեցկությամբ և պատվավոր կին: Մախանը ծառի վրայից հմայված նայում է նորամացացող գեղեցկութիներին: Շուտով պատվավոր գեղեցկութիներին նույնում է նրան և կանչում է իր մոտ: Հիշելով ժեր այգեպանի ընթառ պատվերը՝ Մախանը մկրպից հրաժարվում է ծառից իշնելու վերջապես չի կարողանում դիմուդրել լքնադ գեղեցկություններին և, պիշելով նրա հրավերին՝ իշնում է, նստում գեղեցկություննու մոտ ու խրախճանում նրա հետ: Շուտով բորբոքվում են նրա մասնակին, և նա՝ չկարողանալով այլև զապել իրեն, գրկում ու համարում է գեղեցկությունը շուրջերու Այդ համբուլյուս հմայիլ գեղեցկություններին դառնում է մի ճիգաղ՝ փարագի ժամփիներով: Ամբողջ գիշերը նա իր ճիրաններում սեղմելով Մախանին՝ հեշտանքով համարում է նրան, իսկ նա կիսագիտակից վիճակում այլև չկարուելով դիմադրել՝ մնում է հրեշունու գարշելի գրկում: Վերջա-

պես բացվում է լուսը, և հմայքը շքանում է։ Այժմ Մախանը դունկում է մի անեղբար անապատում, որ ծածկված էր մեռելուտիով։ Խըզի¹ օգնությամբ միայն նա կարողանում է ազատվել այլուղից և հասնել տուն։ Այդ օրից ի վեր նա հագնում է միայն կապույտ գույնի հագուստներ՝ ի նշան սպու։

Պատմվածքը վերջանում է փառարանությամբ կապույտ գույնի, որով ներկված է երկնի կամարը։

Սանդալագույն դղյակը։— Երկու երիտասարդներ,— պատմում է բյուզանդական արքայադուստրը,— ճանապարհորդում էին միասին։ Նրանցից մեկի անունն էր Խեյր, մյուսինը՝ Շարր։² Նըրանց ճանապարհն անցնում էր մի ամայի տեղով, ուր ոչ բուս կար, ոչ մարդկային շունչ։ Շուտով ծարավն սկսում է նեղիլ նըրանց։ Շարրն իր հետ ջուր էր վերցրել։ Խեյրը խնդրում է նրանից տալ իրեն թեկուց մի կում ջուր, խոստանալով դրա փոխարքն Շարրին տալ իր ունեցած երկու թանկագին հակինթները։ Շարրը մերժում է ջուր տալ նրան, մտածելով, թե քաղաքում նա ևս կիսկ հակինթները։ Նա խոստանում է ջուր տալ միայն այն պայմանով, որ Խեյրը թույլ տա հանել իր երկու աշքերը։ Որքան էլ դաման էր պայմանը, այնուամենայնիվ Խեյրն այնքան խիստ պատակ էր զգում, որ համաձայնում է դրան։ Շարրը, օգտվելով այդ համաձայնությունից՝ հանում է ընկերոջ աշքերը, կողոպտում նրան և, առանց խոստացած շրով գոնե նրա ծարավը հագեցնելու, թողնում նրան անապատում՝ ավազների մեջ ընկած ու հեռանում։ Խեյրը մենակ է մնում՝ թափալվելով իր աշքերից հոսող արյան մեջ և տառապելով շամփի ու ծարավի կրկնակի տանջանքով։ Վերշապես նրան գոնում է մի հարուստ քուրդ խաշնարածի ազջիկը։ Կույրին տանում են քուրդի տունը։ Խաշնարածը գիտեր մի ծառ, որի տերևները բուժի դեղ էին և՝ կուրության, և՝ ընկնավորության դեմ։ Այդ ծառի տերևներով Խեյրը բուժվում է, ապա՝ ամուսնաւալով խաշնարածի ազջկա հետ՝ ժառանգում նրա ամբողջ հոտը։ Երկար ժամանակ շանցած՝ լուր է տարածվում, թե շահի ազջիկը տառապում է ընկնավորությամբ, և ով որ բուժի, կդառնա նրա փեսան։ Թրդի խօրհրդով Խեյրը նույն ծառի տերևների միջոցով բուժում է շահի ազջկան, ամուսնանում նրա հետ և թագավոր

¹ Հավիանեական կենդանության տռառպելական հերոսն

² Խեյր հաշնակում է բարիք, Շարր (=շառ)՝ շարիք։

դառնում։ Այդ միջոցին նրա մոտ են բերում Շարրին, որ դարձյաչ ինչ-որ հանցանք էր կատարել Խեյրը հիշեցնում է նրան՝ իր դեմ՝ դարձած շարագործությունը, խստորեն հանդիմանում, բայց և այնուհետև ազատում է առանց պատժելու Խեյրի զայրացած թագալորակերը շահագործությունից նկատմամբ, հետապնդում է նրան, հասնում հետևից ու պանում։

Պատմվածքն ավարտվում է այն բացատրությամբ, թե այն շատի բուժիչ տերևները սանդալագույն էին։

Սպիտակ դղյակը։— Իրանի արքայադուստրը պատմում է, թե մի մեծահարուստ երիտասարդ քաղաքից գուրս ուներ մի հրաշամագույն պարտեզ։ Մի անգամ, երբ նա այդ պարտեզն էր գնում, դեռ ներս շմտած ներսից լսում է ինչ-որ երաժշտության ու երգի ձայն։ Մոտենալով պարտեզի դարրասին՝ նա տեսնում է, որ փակած է դարբասը։ Երկար ժամանակ նա բախում է փակ դռները, ույց ու որ բացելու շի գալիս։ Երիտասարդն ստիպված է լինում բանդել պատը և ներս մտնել։ Այնտեղ նա տեսնում է մի խութք ոչքիկներ, որոնք ազատություն են ու զբոնում։ Տեսնով երիտասարդին՝ ազջիկները կարծում են, թե նա գող է, և այդ ժեկում են նրան։ Սակայն երիտասարդը, վերջապես, կարութանում է հավատացնել նրանց, թե ինքն այդու տերն է։ Ազջիկները հաշտվում են նրա հետ և պատմում, թե իրենք՝ քաղաքի բռնության կենտրոնությունիները՝ հավաքվել են այդտեղ ուրախանակու ազատ, առանց հետաքրքրվող աշքերից քաշվելու։ Նրանք խորհուրդ են տալու երիտասարդին շխանգարել իրենց և առաջարկում են նրան մատրել իրենցից մեկին ու հաճոյանալ նրա հետ։ Երիտասարդը անում է տաղավարը և անցքից ուղարկությամբ դիտում ավազանում լուղացող ազջիկներին ու համեմատում նրանց իրար հետացապես նրա ընտրությունը կանգ է առնում մեկի վրա, որին և անձիշապես բերում են իր մոտ։ Երկու երիտասարդները կամեանում են անձնատուր լինել վայելքներին, բայց և, միաժամանակ, պատմ են, որ բազմաթիվ խանգարիչ հանգամանքներ կան։ Ի վերաբերյալ երիտասարդը այն մտքին է հանդում, որ բախուր ինքն է հանդարություն իրենց՝ թեթևամտորեն վայելքներին արվելու, որոշում ամուսնական աղջկա հետ բոլոր սովորությունների համաձայն և

այն ժամանակ օրինական կերպով հաճոյանալ նրա հետ կամեցածին շափ:

Պատմվածքը վերջանում է սպիտակ գույնի՝ մաքրության ու խաղաղության խորհրդանշանի՝ փառարանությամբ:

Վերջանում մն նովելները, ավարտվում է Բահրամի մի շաբաթվա կյանքի ցուցադրումը: Թողնելով Բահրամին իր սիրութիւնների դոյլակում՝ հեղինակը պատմում է, թե կրկին Իրանի գրածանրանում է կործանման սպառնալիքը: Գարնանը վինական խարանը կրկին հարձակվում է Իրանի վրա: Բահրամը ցանկանում է դիմադրել կովով, բայց այլևս ուազմունակ զորք չունի: Չունի նաև բավականաշափ դրամ՝ վերստին զորք հավաքելու համար: Եվ, ահա, նրան «օգնության» է դադիս վեցիր Ռասմունուշանը. Նա խորշուրդ է տալիս թագավորին՝ բռնի կերպով հպատակներից կորցել որպամ և այդպիսով փրկել երկիրը կործանումից: Բահրամը հաճանարարում է վեզիրին՝ անձամբ կատարել այդ և տալիս է նըստ ումեն լիազորություն: Կեզիրը դառնում է երկրի փաստական տեսքները: Կարճ ժամանակում նա անսանձ կեղեկումներով ու բռնություններով ավերում է երկիրը, բանտերը լցնում անհամար անմեղ բանտարկյաններով: Մինչեռ Բահրամը, վայելքների, խրամաճաների ու որսորդությունների մեջ անցկացնելով օրերը, անտեղյակ է վեզիրի անիրավություններին, և հպատակներից ոչ ոք էլ չի համարձակվում այդ մասին հայտնել նրան: Նա մտահոգվում է երբեմն այն բանի համար, որ թշնամին չի պարտվում և երկրորդ դեռևս մնում է վտանգի մեջ: Ի վերջո, մի անգամ որսորդության ժամանակ նա, շուրջ որոնելով՝ ընկնում է մի հովի մոտ: Հովից խրճիթի առջև սուսնոց կախված էր մի անշնչացած շում: Բահրամը հարցում է հովից, թե ինչո՞ւ այդպիս պատել է շանը: Հովիցը պատմում է, թե շումը յուր հոտի հավատարիմ պահապանն է. եղել շատ անգամ ինքը շան է հանձնել ամրող հոտը և որևէ տեղ գնացել, իսկ շումը լիակատար ապահովության մեջ պահել է: Հոտը: Սակայն մի անգամ հովիցը նկատել է, որ հոտը նվազում է: Պարբերաբար ստուպելով՝ նա համոզվում է, որ իսկապես ուխարների թիվը պակասում է, բայց ոչ մի կերպ չի կարողանում պատճառը գտնել: Մի օր, երբ առվի ափին, հոտի մոտ, ինքը՝ քննելուց հետո, պառկած մտածում էր իր գրեախտության մասին; առավ, որ մի էդ գայլ մոտեցավ ու շան լեզվով կանչեց իր գտմա-

որին: Դամփոր մոտեցավ գայլին, դուրսութեց նրան, ապա կատաշելով իր ցանկությունը՝ փուլից գետնին ու քնեց: Դայլը, միանգամայն արահովված, քաշելով տարավ հոտի առաջնորդ խորին: Այդ պատճառով էլ, ահա, նա կախել է շանը. ո՛վ դավաճանին շան մահով չի պատժի, իմացիր, նրան աշխարհում ոչ ոք չի փառաբանիր, — վերջանում է հովիցն իր պատմությունը: Բահրամը հասկանում է հովիցի պատմության միխարերական միտքը, և առդպում է խորը մտածմունքների մեջ: «Հովիվը ես եմ, հպատակները՝ իմ հոտը, իսկ վստահություն վայելող պահապանը՝ իմ առաջին վեզիրը... Երբ թագավորության հիմքերը կործանվում են, մատահված անձից պետք է հաշիվ պահանջել», — որոշում է նա, և, քաղաք վերաբառնալուն պես, պահանջում է բանտարկյանների ցուցակը: Ցուցակում նա տեսնում է, որ բանտարկյաններից շատեցի անգամ դիմաց դրված է: «Թագավորը հրամայում է պատճել... ներում է շնորհում վեզիրը»: Բահրամը հասկանում է ամեն ինչ, նա հրամայում է վեզիրին բանտարկել, իսկ անմեղ բանտարկյալներին ազատել: Այստեղ բանսատեղը դարձյալ ներմուծում է յոթ հավելյալ պատմվածքներ: բանտարկյաններից յոթ հոգի պատմում են թագավորին, թե ինչու ես իրենք կալանավորվել: Դրանք ցընցող սրաւավորություն թունող պատմություններ են, որոնք մերկացնում են վեզիրի անուուր բռնություններն ու մեքենայությունները: Խարանի կողմից Բահրամի մոտ ուղարկված սուրբանդակների միշտցավ երկան է հանգում վեզիրի մի նողկալի հանցանքը ևս: Նա զարտոնի բանակցություններով խոստացել է խարանի՝ երկիրը նրան հանձնել: Բահրամը մահապատճի է ենթարկում վեզիրին: Առայն դրանով ամեն ինչ շի վերջանում: Խորսած ցնցված այդ զառն իրողություններից, նա համոզվում է, որ դրանց համար առաջին հերթին ինքն է պատահանատու, ինքը, որ, անձնատու հեղած իր հաճուրներին, աշքաթող է արել իր պարտավորությունները հպատակների հանդեպ և երկրի կառավարումը հանձնել վեզիրի ընթացքները: Նա հրամարվում է իր նախկին կենցաղից, հրկիդում է յոթ գրյակները և հարեմը ցրում: Նա չի կարողանում հրաժարվել միշտցան սրարդությունից և, ի վերջո, որսորդության միջոցին էլ մաս է զանում: Մի անգամ երկու ծառայի ընկերակցությամբ նա հետապնդում է մի ցիրի: Ծիր տանում է նրան դեպի մի քարհանակ: Մանեկով քարանձավի ներսը՝ նա այլևս չի վերադառնում: Զորքը

Հառնում է այդտեղ, ուր սպասում էին շփոթված ծառաները. նրան սպասելուց հետո՝ նրանք տեսնում են, թե ինչպես քարանձավագից փոշի է ենում ու լսվում մի ձայն, որ ասում է, «զնացեք տոմ», թագավորը գործ ունի: Մտնում են քարանձավը, որ շատ խոր չէր և լուսներ ուրիշ ելք, բայց Բահրամին չեն գտնում, Գալիս է Բահրամի մայրը. նրա հրամանով փորում են քարանձավի հիմքը, բայց գարծյալ չեն գտնում թագավորին, Այդպես էլ խորհրդավոր կմրգով անհայտանում է Բահրամը:

Եթե Նիզամիի առաջին ստեղծագործությունը կրում էր դիդակտիկ բնույթ, իսկ երկրորդն ու երրորդը՝ սիրային-ոռմանութիւնական, ապա՝ այս ստեղծագործությունը կրում է գերազանցապես արկածային, մասամբ նաև՝ հեքիաթային բնույթ: Հատկապես պետք է նշել այն թեթև, հանգստացուցիչ տրամադրությունը, որով համակված է այս վիսկերգը: Ժնուրով ու Շիրինում՝ հաղթանակսկ սիրութարեքաստիկ ընթացքը զուգորդված է ցնցող, տրագիկ մոմենտներով. մի կողմից Ֆարհադի ողբերգական ինքնազնումը, մյուս կողմից՝ Խոսրովի որդու դավադրություններն ու վիպերգի մասի վերջավորությունը խոր տրագիզմի դրոշմ են թողնում. վիպերգի վրա մելլի ու Մեշնումի մեջ երկու սիրահարների զժրախտ սիրութաշող ընթացքը ավելի և ավելի խորացնում է նրանց տրագիֆան՝ հասցնելով եղբական վախճանի: Մինչդեռ այստեղ, «Յօթ պեղծցկուհիների» մեջ, թե՛ Բահրամի ամբողջ արկածները, և թե՛ սիրութրությունը ոչ տրագիկ, այլ առավելապես օպտիմիզմի բնույթ ունեն: Այս բանի համար նա օգտագործել է և՛ արկածային տարրը, և՛ հեքիաթայինը, որ մի տեսակ վերացումն է իրական կյանքից, մոռացումն՝ բոլոր անախորժությունների, յավերի ու տառապանքների և սլացումն դեպի երջանիկը: «Յօթ պեղծցկուհիների» պատմած նովելներով նա ընթերցողին հեռացնում է իրական կյանքից ու տանում դեպի հեքիաթայինը, որ նկարագրված է այնպես վառ գույներով: Եվ սակայն, չնայած այդ բոլորին, Նիզամին այստեղ էլ հետևողական է իր սկզբունքների մեջ, այստեղ էլ նա հանգես է գալիս իբրև խիստ քննադատ ու ոչ մի զիշում չի կատարում: Զնայած հեքիաթների ու արկածների առկայությամբ, այնուամենայիշվ այստեղ ևս իր հիմնական նպատակն է ունեցնել և այդ երկրի կառավարման հարցն է: Իր բոլոր արկածներով հանդերձ՝ Բահրամ Գուրը հանգես է գալիս առաջին հերթին իրեւ թա-

գավորի կերպար, և Նիզամին օգտագործում է այդ կերպարն իր հայրացքները գրւուրելու համար: Հեղինակը երկրի մեծամեծների բիրանով դատապարտում է Բահրամի հորը, քննադատում նրան և արդարացնում նրա գեմ եղած դժունությունները: Բահրամը փոխարինում է յուր շանիցյալը հորը և խոստանում է լինել արդար, բարի ու հոգատար: Եվ, ահա, Նիզամին ցուցադրում է նրան գահի վրա: Ըստ ամենայնի Բահրամը ներկայացված է վիպերգում իրեւ դրական հերոս: Հեղինակը ցույց է տալիս, որ երբ նա անձամբ գրադպում է պետության գործերով, երկիրը բարդավաճում է, հպատակներն ապրում են երջանկության ու լիովիյան մեջ: Բահրամը շափազանց բարի է ու հոգատար իր հպատակների նկատմամբ: Չորս տարի տևող սովորի ժամանակ նա առանց խնայելու իր գանձնարդը տրամադրում է ժողովրդին սովոր փոկելու նպատակին և դրա շնորհիվ այդ շորս տարվա ընթացքում սովոր մեռնում է միայն մի մարդ, որի համար թագավորը գառնորեն սպում է, համարելով այդ իր մեղքը: Սակայն, իր բարությամբ, արդարությամբ ու հոգատարությամբ հանդերձ՝ Բահրամը ունի նաև վնասակար հակումներ. նա շատ է տարվում իր վայելքներով, մոռանում է պետության գործերը, որի հետևանքով էլ երկիրը վտանգի է նեթարկում, վրատանգած մարդիկ անսանձ կամայականություններով ու բռնություններով կեղեկում ևն հպատակներին և դրանով իսկ խախտում պետության հիմքերը, կործանում երկիրը: Եվ, ահա, Նիզամին երկու անգամ փորձության առաջ կանգնեցնելով իր հերոսին՝ վերշտափս դարձի է բերում նրան, Հրաժարեցնում վնասակար մոլություններից ու դարձնում կատարելապես գովելի թագավոր: Ուշագրագի է, որ Նիզամին խրատական է կարում հովվի բերանով, որ հանգիս է զալիս որպես կենսափորձի և ժողովրդի իմաստության ձարձնացում: Ի վերջո, այստեղ էլ Հեղինակն անողոք քննադատության է ենթարկում պետական գործիչների անիրավություններն ու շարագործությունները: Յոթ բանտարկյաների պատմածները, առունք Նիզամին անշուշտ իրական կյանքից է քաղել և որոնք շկան նիրդուու «Եահ-Նամեի»՝ Բահրամ Գուրին նվիրված հատվածում, հիմնալի ցուցադրումն ու մերկացումն են յուր ժամանակի տիրակաների կամայականությունների, սանձարձակ կեղեցումների ու բռնությունների: Հեղինակը անիրավարար բանտարկվածների թերանուկի իր բողոքն է ուղղում ժամանակի բռնակաների դեմ՝ ներ-

կայացնելով այդ պատմվածքներն իբրև մի մեղադրական ակտ՝ ֆեռազական արխստոկրատիայի նկատմամբ, նա վառ դուռներով ցուցադրում է պալատական պաշտոններին ժամագծությանը, նենգություններն ու դավաճանությունները, ապացուցելով, թերևս ոչ առանց ցավի, որ նույնիսկ արդար թագավորը անօգնական և անդոր է, որովհետև շրջապատված է այդպիսի պաշտոնյաներով՝ Այսպիսով, այս ստեղծագործության մեջ ևս Նիգամին հարադրատ մնալով այն սկզբունքին, թե գեղարվեստական ստեղծագործությունը ոչ միայն պիտի է ծառայի ընթերցողի գեղարվեստական հաճույքներին, այլև պիտի է ուսուցանի, հանդիս է գալիս մի կողմից իրեն քննադրատող ու մերկացնող, մյուս կողմից՝ իրեն քարոզիլ ու խրատող, Բայց եթե «Գաղտնիքների գանձարանում» նա նույն բանը կատարում էր անկախ, իրար հետ չկապակցված, երբեմն չոր խրատական «զրույցներով», ապա՝ այստեղ նա իր իրատները տալիս է գեղարվեստական վառ, անշնչելի տպավորություն թողնող պատկերների մեջ:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այս ստեղծագործության կառուցվածքը: Մի կողմից՝ Բահրամի արկածները, իսկ մյուս կողմից՝ Հավելադիր պատմվածքները, որոնցով միշնորդագորվում են այդ արկածները, զարդանում են վիպերգի մեջ զուգահեռարար, և հենց դրա շնորհիվ էլ շափազանց բարդանում է պին-մի կառուցվածքը: Եվ, սակայն, չնայած այդ ամբողջ բարդության, հեղինակը բացադրել վարպետությամբ կարողացել է ներհյուսել աշդ բոլորն իրար և ստեղծել մի կուռ ամբողջություն: Ինչպիսի գարմանալի ներդաշնակություն են կազմում երիտասարդ արքայանի դդյակի կառուցումը և յոթ դդյակների կառուցումը, յոթ պատկերները և յոթ գեղեցկուներները, նումանի զղումն ու ճրպ-նակյաց դառնալը և Բահրամի հրաժարումն իր վայելքներից, դդյակների հրկիզումն, հարեմի ցրումը, յոթ գույների և յոթ նու-փելների համապատասխան հաջորդականությունը, վեցիրի շարա-դրությունները և յոթ բանտարկյալների պատմածները, Բահրամի գոտած գանձերը՝ բարայրում և նրա խորհրդավոր անհայտացումը քարտանձավում: Նիգամին ամենավառ երանգներով կարողացել է գուգորդել այդ բոլորն իրար հետ, շաղկապել ու ձուկել մի ներդաշ-նակ ամբողջության մեջ: Չափազանց բնորոշ է հատկապես յոթ գեղեցկուների պատմած նովելների գույների ներ-

դրաշնակությունը: Բահրամն իր այցելություններն սկսում է ամե-նամուալ գույնի, սև գույնի դպրակից ու վերջացնում սպիտակով: Յոթ նովելներն էլ իրենց բովանդակությամբ համապատասխանում են գույների հաջորդականությունը: Առաջին մոալլ, ճնշող տպավորությունը նովելին հաջորդում էն երջանիկ ավարտում ու նեցող նովելները, մինչև վերջնը, որի էությունն է կազմում անա-րատ ու երջանիկ սիրո փառաբանությունը՝ համապատասխան սպի-տակ գույնի գովրով:

«Յոթ պատկերներն» այսպիսով, գեղարվեստական մի հրա-շալիք ստեղծագործություն է, անթառամ՝ իր վառ գույներով, տպա-փորիչ՝ իր պատկերներով, ցնցող՝ բռնությունների դեմ ուղղված բողոքով: Իր հումանիդմով ու լավատեսությամբ այս ստեղծագոր-ծությունը միշտ թարմ, միշտ գրավիչ ու հրապուրիչ է եղել, վարա-կել է ընթերցողներին առողջ տրամադրությամբ: Այսօր էլ նա իր վեղարվեստական կատարելությամբ զմայլիչ մի ստեղծագործու-թյուն է, և իրեն այդպիսին էլ կմնա:

Դիմանդար-Նամեն:— Յուր վեցին ստեղծագործության հա-մար նիգամին իրեն սյուժե ընտրել է Ալեքսանդր Մակեդոնացու կյանքը: Այս թեման նրա ընտրությանն արժանացավ, անշուշտ, այն բանի շնորհիվ, որ Ալեքսանդրի մասին ավանդությունները տարածել էին Արևելիքի ժողովուրդների մեջ տարբեր վարիանտնե-րով, ավանդություններ, որոնց մեջ Ալեքսանդրը ներկայանում էր իրեն մեծ զորքարու ու մարդարու: Այստեղ էլ հեղինակն իր ստեղ-ծագործության համար նյութ է քաղում տեղական ժողովուրդների՝ ոչ միայն մաշմեդական, այլև քրիստոնեական ու հրեական ժողո-վուրդների ավանդություններից և, հետևաբար, այստեղ էլ նա իր ստեղծագործությունն այսպիս ասած, տեղայնացնում էր ու կա-պում հարևան ժողովուրդների հետ: Մյուա կողմից՝ Ալեքսանդրի կերպարը նրան հնարավորություն էր տալիս ընդարձակորեն շա-րադրելու իր փիլիսոփայական հայացքները՝ օգտվելով Ալեքսանդ-րի ու Արքատունելի միջև եղած կապերից: Այսպիսով, Ալեքսանդր Մակեդոնացուն նիգամին դիտում էր ոչ միայն որպես հզոր նվա-ճութ, ինչպես ներկայացված էր նա ավանդությունների մեջ, այլև որպես փիլիսոփայի ու մարդարեի: Մանոթանալով նրա մասին ե-րած ավանդություններին՝ նիգամին սինթեզի է ենթարկում դր-ութեա, քաղում յուրաքանչյուրից այն, ինչ որ անհրաժեշտ է հա-

մարում և կերտում է՝ մի բացառիկ իդեալական կերպար: Ինչը՝ Շեղինակը, քննադատում է իր ուսումնասիրած ավանդությունների միահղողանիությունը և հայտնում, թե ինքը դիտում է Ալեքսանդրին երեք կողմով՝ միացնելով դրանք մի ամբողջական, կատարելու կերպարի մեջ:

Բացի նորագույն պատմություններից, ես կարդացել եմ նաև Հրեական, քրիստոնեական ու պահավական գրեր, —
ասում է նա,

... Ուշանք կոչում են նրան գահակալ,
Երկրների Հովանավոր, դեռ ավելին՝ Հորիզոնների նվաճով:
Ուղիղները՝ նրա մերձավոր մարդկանցից,
Նրան իմաստության վկայագիր են տվել:
Երրորդները՝ նրա մաքրության ու կրոնի նկատմամբ ունեցած
նախաձեռնության շնորհիք.

Նրան համարել են մարդարեն:
Իսկ ես իմաստումների ցանած երեք հատիկից
Ուզում եմ աճեցնել մի պտղարեր ծառ:
Նախ՝ ես կրախեմ թագավորության դռները,
Կպատմեմ երկրների նվաճման մասին:
Ապա Գհրուեմ խոսքեր իմաստության մասին,
Կնորոգեմ հնագանդ պատմությունները:
Հետո կրախեմ մարդարեության դռները,
Զի և տերն է կոչել նրան մարդարեն:

Ինչպես տեսնում ենք նիզամին խիստ ընդարձակ ծանոթաւություն է ունեցել Ալեքսանդրի մասին եղած ավանդությունների հետ, նա գիտակցաբար վերցրել է դրանցից ինչ-որ անհրաժեշտ է եղել իր նպատակադրմանը և, որ կարեւոր է, օգտագործել է այդ աղբյուրները խիստ քննադատորեն: Նրա այդ քննադատական զերագերմունքը առկա է միշտ՝ սկսած Ալեքսանդրի ծագման պատմությունից մինչև վերջը:

Ամբողջ ատեղծագործությունը նիզամին բաժանել է երես մասի: Երկու մասերի ընդհանուր վերնագիրն է, ինչպես առել ենք, «Ամբանդար-Նամեն»: Բացի այդ ընդհանուր խորագրից, բուրագանը մասը կրում է առանձին վերնագիր: Առաջին՝ մասը, որ ծափալով շատ ավելի մեծ է, քան երկրորդը, կոչվում է Շե-

րաֆ-Նամեն» (Փառքի գիրք): Այդ վերնագիրը, ինչպես երեսը է ներածությունից, պատկանում է Հեղինակին, և այդպես նա վերնագրեն է, անշուշտ, նկատի առնելով այն, որ հենց այդ մասում է պատմվում Ալեքսանդրի հաղթանակների մասին, հաղթանակներ, առողջ շնորհիվ նա փառքի գագաթնակետին է հասնում:

Երկրորդ մասը որոշակի վերնագիր չունի: Հիմք ընդունելով այն բառերը, որոնցով նա սկսվում է, հաճախ կոչում են «Երես-Նամեն» (Կրատագիրք), սակայն, նույն այդ մասը կոչում են նաև «Երեսալ-Նամեն» (Հաջողության գիրք): Բացի գրանից, հին աղբյուրներում երբեմն առաջին մասը կոչում են «Բներքի» (Ցամաքացին), իսկ երկրորդը՝ «Երեսի» (Սովային), հիմք ընդունելով այն, որ երկրորդ մասում պատմվում է Ալեքսանդրի ծովային ճանապարհորդությունների մասին:

Գիրքն սկսվում է գարձալ ներածական գլուխներով, որոնցից առանձնապես ուշագրավ են այն մասը, որի մեջ համառոտակի շարադրված է զբի ամբողջ բռվանդակությունը, և այն մասը, որի մեջ ընթերցողի հատուկ ուշադրությունն է հրավիրում այս ստեղծագործության վրա: Այս վերջին հանգամանքն առանձնապես ուշագրավ է այն բանով, որ ցույց է տալիս, թե որքան մեծ նշանակություն է տվել նիզամին իր այս վերջին պեսմին: Եվ այդ պատմական չէ, այսուեղ բանաստեղծը լայնորեն ծավալելով իր մտքերը, կարծես թի մի ընդհանուր հայտարարի է բերում նախորդատեղծագործություններում ասածները, ամբողջացնում դրանք և ասում իր վերջին խոսքը: Այսպես պետք է բացատրել այն երևությը, որ նիզամին իր նախորդ ատեղծագործություններից և ոչ մեկում լի դիմում՝ ընթերցողին՝ հատուկ ուշադրություն նվիրելու, իսկ այսուեղ առանձին գլուխ է հատկացնում դրան:

Բուն ատեղծագործությունն սկսվում է Ալեքսանդր Մակեդոնացու ծագման պրոբեմով: Հայտնի է, որ այդ առթիվ տարբեր ժողովուրդների մեջ տարբեր լեզենդներ են Հորինվել, և, որ շահագանց հետաքրքրական է, մեծ մասամբ հորինել են նվաճված ժողովուրդները՝ ցեղակցական կապ ստեղծմալով Ալեքսանդրի ու իրենց միջև: Այդ միանգամաշխ համկանալի է: Ալեքսանդրի հաղթանակներն այնքան անուրանալի էին, որ որևէ կերպ հերքել դրանք չէր կարելի: Եվ, ահա, նվաճված երկրի ֆեղալական արիստոկրատիան հորինում է այն լեպենդը, որ, իբրև թի, Ալեքսանդրը ցե-

շակեց է իրենց, և արդարացնում է նրա հաղթանակը: Խսկապես, եթե Ալեքսանդրը, ասենք, Դարեհի որդին էր, ծնված Փիլիպպոսի աղջկանից, ապա՝ ի՞նչ գարժանալի բան է իրանի նվաճումը նրա փողմից: Այսպես ահա, յուրաքանչյուր երկրի ֆեռութիզմը՝ Ալեքսանդրի մահվանից հետո, հորինում է իր և Ալեքսանդրի ցեղակցության առասպելը: Դրանցից առանձնապես պետք է հիշել սուս Կալիսթինեսի վեպը, որի մեջ Ալեքսանդրը համարվում է եգիպտական քուրմ Նեկտաների և Մակեդոնիայի թագավոր Փիլիպպոսի կողունքու որդին: Այսուհետև, տվյալ դեպքում ուշագրավ է նաև իրանական վարիանուր, որի մեջ պատմվում է, թե Ալեքսանդրը Աքենիայն հարստության թագավոր Դարեհի և Փիլիպպոսի աղջկա որդին է, որ որդեգրվել է պապի՝ Փիլիպպոսի կողմից: Այս լեգենդը մանրամասնորեն, իրքև միակ ճշմարիտ բացատրություն Ալեքսանդրի ծագման մասին, պատմում է Ֆիրոզափին, չնայած այն հայտնի թշնամանքին, որ տածում է դեպի Ալեքսանդրը: Ի դեպ, այս լեգենդներով ոչ միայն արդարացվում էր պարտությունը, այլև իրենց ցեղակից դարձնելով մակեդոնացի զորավարին, տոհմիկ ազնվականությունը բաժանում էր նրա հետ նաև նրա փառքը: Եվ, իրոք, տոհմիկ ազնվականության գաղափարախոս Ֆիրոզափին ոչ միայն արդարացնում է Ալեքսանդրի հաղթանակը Դարեհի դեմ, այլև ուղղակի ասում է, թե ինչպես այդ, այնպես էլ բոլոր մյուս հաղթանակներին Ալեքսանդրը հասել է այն բանի շնորհիվ միայն, որ նրա երակներով հոսում էր աքեմենյանների արյունը: Նիզամին Ալեքսանդրի ծագմանը նվիրված գլխում պատմում է այս լեգենդը, բայց մերժում է, համարելով այն սուսու: Նա պատմում է նաև մի ուրիշ լեգենդ, ըստ որի Ալեքսանդրը մի թշվառ միանձնուելու որդիի է: Որսորդության ժամանակ Փիլիպպոսը գտնել է նրան ավերակների մեջ՝ մոր դիակի կողքին, սեփական մատը ծծելիս, և որդեպեմ է: Սակայն հեղինակը սրան էլ չի հավատում: Երկուսի մասին էլ նա ասում է հետևյալը.

Երկու պատմության մեջ էլ ճշմարտությունը կորած է,
Դատարկ խոսքերը ուշադրության արժանի չեն:
... Կարդացել եմ ես բոլոր երկրների պատմությունները
Որ տղան Փիլիպպոսից է ծնվել:

Այսպես, ուրեմն, Նիզամին հիշում է այդ լեգենդները, բայց ընապատարար մոտենալով զրանց, մերժում դրանք ու գտնում, որ Ալեքսանդրը ուղղակի Փիլիպպոսի որդին է: Այսպես է լուծում նաև Ալեքսանդրի ծագման հարցը: Այսուհետև հեղինակը հատում էշապրություն է նվիրում յուր հերոսի դաստիարակությանը: Ալեքսանդրը սպառում է Արքատունի հետ և ստանում է բազմակողմանի կրթություն: Վերջապես Ալեքսանդրը գահ է բարձրանում հոր մահից հետո: Նա երդում է լինել արդար թագավոր և մտածել իր հայտապես անդամների երշանկության մասին: Բնակես նկարագրում է Նիզամին, նա խևապիս իրազործում է իր երդումը: Շուտով ամբողջ աշխարհում տարածվում է նրա՝ իրեն արդար և իմաստուն թագավորի՝ համբավը: Եվ, առաջ համբավը լսած եղիպտացիները օգնություն են խնդրում այդ արդար թագավորից: Նրանք հարսություն են Ալեքսանդրին, որ սկամորթ զենքիները (զանգիքարցիներ) ամայազնում են ամբողջ Նեղոսյան Հովիտը, և խնդրում են օգնության համար: Ալեքսանդրը հանձն է անում օգնել և արշավելով զննվիների դեմ, անեղ մարտում հաղթում է նրանց: Իր հարսություն առաջական ափարից նա մեծամեծ նվերներ է ուղարկում Դարեհին, որին հարկատու էր Փիլիպպոսը: Սակայն Դարեհը մեժ արժեք չի տալիս Ալեքսանդրի կողմից ցուցաբերված այդ ուշադրությունը և ըստ արժանվուն չի գնահատում մեծագին դանձները: Միարյավորված Ալեքսանդրը որոշում է այլև հարկ շտալ նրան և խցել իր հարաբերությունները նրա հետ: Նա հանգամանորեն հաշվել է առնում Դարեհի զրոյթյունը, շշռադատում է նրա և իր ուժերը, ապա՝ նոր տարվա օրը խնջույքում լսելով երդի կուզ՝ ամբողջ աշխարհին տիրելու մասին, որոշում է սկսել իր արշավանքները Դարեհի դեմ պատերազմելուց ու ետ է պահանջում նրան ուղարկած իր նվերները: Մի անգամ նա որսորդության ժամանակ տեսնում է իրար հետ կովող երկու կաքավ, որոնցից մեկին իր անունը զնելով, մյուսին՝ Դարեհինը, ուշադրությամբ հետևում է կովի ընթացքին, մտածելով, որ իր առաջիկա պատերազմում կը հաղթի նա, ում անունը կրող կաքավն այս կովում հաղթող դուռը պա: Կոփիս ավարտվում է այն կաքավի հաղթանակով, որ Ալեքսանդրի անունն էր կրում, բայց օդ բարձրանալով ընկնում է արծիքի ձեռքը: Այս նախագուշակությունից Ալեքսանդրը համոզվում է, որ ինքը հաղթելու է, բայց իր կամնքն էլ կարմատու է լիւ

Նելու Այնուամենայնիվ, վստահ իր հաղթանակին, նա պատրաստվում է պատերազմի: Շուտով նրա մոտ են գալիս Դարեհի սուրհանդակները և հայտնում են, թե իրանի թագավորը հարկ է պահանջում: Գայրացած Ալեքսանդրը խստորեն մերժում է նրանց. «Ով կամագոր կերպով նվիրներ է ուղարկում, նա, վախկոտի նման, ստորագուցի հարկ չի ուղարկի», — ասում է նա և վերադարձնում սուրհանդակներին: Դարեհը կրկին ուղարկում է սուրհանդակներին, այս անգամ հանձնելով նրանց գնդակ, շովան (խաղափայտ) և քնչութ, որոնք սուրհանդակը պետք է տար Ալեքսանդրին, եթե նա մերժեր հարկ տալ: Ալեքսանդրն իսկապես մերժում է, և սուրհանդակը տալով նրան գնդակն ու շովանը, իսկ քնչութը ցանելով հատակին, բացատրում է դրանց միտքը, գնդակն ու շովանն ուղարկելով՝ Դարեհն ուղում է ասել, թե Ալեքսանդրը դեռ երեխա է և պետք է խաղա դրանցով, իսկ քնչութը նշանակում է, թե Դարեհը գորքերն անհամար են: Սակայն Ալեքսանդրը բոլորովին այլ ժեկնություն է տալիս դրանց.

Ինձ Դարեհը նրա համար չէ՝ ուղարկել շովանը, արդյոք,
Որ իրենից խլեմ թագավորությունն ու իշխանությունը, —
ասում է նա:

Իսկ գնդակը, որ ես տեսնում եմ իմ առջև,
Աստղաբաշխները ձևով երկրագնդի հետ կհամեմատեն:

Հաստակին թափած քնչութի վրա թոշուներ է բաց թողնում, ու ունք իսկույն մաքրում են ամբողջ քնչութը, և Ալեքսանդրը հայտնում է եղրակացությունը.

Թող Դարեհն ուղարկի քնչութի նման բազմաթիվ գորքեր,
իմ զինվորները թոշուներ են, քնչութը՝ նրանց կեր:

Քնչութի փոխարեն Ալեքսանդրը վերադարձող սուրհանդակներին է հանձնում սպանդի (սիփենդ) դառն սերմերը, որ ստուի շեն ոչ մի թոշունի համար, ապա՝ սկսում է արշավանքի պատրաստությունը: Շուտով նա լուր է ստանում, թե Դարեհը մեծ զորքով մտել է Հայաստան և արշավում է Ալեքսանդրի գեմ Վերջինս յուր հերթին աներկյուղ կերպով շարժում է իր զորքը: Խորհրդակցելով

իր մեծամեծների հետ և նախագծելով հարձակման գործողությունները՝ Դարեհը հանդիմանանքներով ու սպառնալիքներով լի նամակէ ուղարկում Ալեքսանդրին ու պահանջում հնադանդություն: Ալեքսանդրը պատասխանում է մեղմ, բայց խրառական ու հապար տոնով, «Եսատված քեզ զորություն է տվել, բայց մի գոռոզանեար աստծով առանձնաշնորհվածների հանդեպ», — ասում է նա և այդ ուղով շարադրում ամբողջ պատասխանը: Վերջապես սկսվում է տհնեղ ճակատամարտը երկու զորքերի միջև՝ Մոսուլի մոտ: առաջին օրը երկու կողմերն էլ կովում են անդիշող ու կատաղի և մինչեւ երեկո ոչ մեկը չի զիջում իր զիրքերը: Զորքերը գիշերային դադար են առնում: և, ահա, հենց այդ ժամանակ Դարեհի զորավարներից երկուար, որոնք անպատված էին իրենց թագավորից, դալիս են Ալեքսանդրի մոտ ու խոստանում սպանել Դարեհին, եթե Ալեքսանդրը վարձատրի իրենց առատորեն: Ալեքսանդրը, մտածելով, որ սպանել տալով Դարեհին կարող է խոսափել արյունահեղ ճակատամարտից ու խնայել հազարավոր զինվորների կյանքը՝ ընդունում է նրանց առաջարկը և զորավարները գնում են: Հաշորդ օրն իսկ նա լուր է ստանում, որ Դարեհը յս խիված է: Դնալով շորդ ախոյանների հանդիպումը: Աչ հաղթողի գոռոզությամբ, այլ վեհանձնորեն ու ցավակցաբար է դիմում Ալեքսանդրը Դարեհին, որ տառապում է մանվան դեմ իր անզորության գիտակցությամբ, բայց հարգանքով ընդունում հաղթող ախոյանի ցավակցության խոսքերը: Ալեքսանդրը խոստանալով ճշտությամբ կատարել դրանք: Դարեհը հայտնում է հետեւալ երեք ցանկությունները.

Առաջին այն, որ անմեղներին սպանելու համար գույնես արգար դատավոր՝ մարդասպանների նկատմամբ:
Երկրորդ՝ այն, որ աբքայական գահը և թագը
իմաստաբար պահես և շարիք շգործես:
Սրտիցդ հանիր ատելության սերմը,
Մի զրկիր այս երկիրը մեր տոհմից:

Երրորդ՝ այն, որ իմ կանանց մոտ գնալով
Չանպատվես իմ կանանցը:
Ռովզեննեկին, որ դուարն է իմ
Եվ խնամված է իմ խնկ ձեռքի տակ,
Քո կինը դարձրու...

Ալեքսանդրն ընդունում է այդ պատվերները Երկու գլուխա-
վարներին, որոնք սպասնել էին Դարեհին, նաև վարձատրում է Հա-
րուստ պարգևներով՝ իր խոստումը կատարելով, բայց անմիջա-
պես մահապատժի է նեթարկում նրանց՝ իրեւ դավաճանների: Նաև
գա՞ է բարձրանում, հրովարտուկ արձակում՝ խոստանալով արդա-
րությամբ կառավարել երկիրը և բռնությունը հալածել: Կամենակով
վերացնել զրադաշտական կրոնը՝ նաև ամենուրեք կործանել է տա-
լիս ատրուզանները և արգելում կրակապաշտությունը: Դարեհին
սված խոստանայ համաձայն, ամուսնանալով գեղեցկուի Խորշե-
նեկի հետ, Արիստոտելի հետ ուղարկում է նրան Հոմաստան, իսկ
ինքը գնում է Արարփա, առանց պատերազմի իրեն հպատակեց-
նում արարներին, ապա՝ Քաֆե գնալով՝ կատարում սահմանված
պառույտը տաճարի շուրջը և Երաքով ուղևորվում դեպի հայրենիք: Այդ
միջոցին նրա մոտ են գալիս Աղբեկանի սուրբանդակները և
օգնության կանչում նրան՝ արմենների ու արխազների դեմ: Հնա-
գանդեցնելով հայերին և ապա՝ արխազներին, որոնց Դուռալ թա-
գավորի դմմ ադրբեջանցիները բռնորդել էին Ալեքսանդրին և օգնու-
թյուն խնդրել, նա Վրաստան է մտնում ու կառուցում այնտեղ
Թիֆլիս քաղաքը: Ուշագրավ է, որ նիզամին շատ մեծ գովասան-
րով է խոսում՝ այդ քաղաքի մասին և համարում է այն ուղղակի
Երկրային դրախտ: Այստեղից նա ուղևորվում է դեպի Թերքա-
նիզամին վառ գույներով նկարագրում է այդտեղի բնության գե-
ղեցկությունը, գեղեցկությունն այն երկրի, որ այնքան հարազար-
դու իրեն: Ալեքսանդրը հիանում է այդ երկրի բացառիկ գեղեցկու-
թյամբ ու հարցնում է, թե ո՞վ է այդ երկրի թագավորը: Պատմուա
նն, որ Թերդայի տիրակալն է մի կին՝ Նուշար անունով, որ իր ի-
մաստությամբ ու արդարությամբ երկիրը միշտ բարգավաճ ջի-
ճակում է պահում: Նրա ծառաները միայն կանայք են: Հրաժար-
ված մարմնական վարելքներից՝ նա նպիրվել է միայն հպատակնե-
րի բարեկեցությունն ապահովելու գործին: Թեև կին է, բայց յոյ

ուազմական հզորությամբ նա անպարտելի է: Ալեքսանդրը գնում է
թնրդա: Նուշարին ուղարկում է նրան մեծամեծ նվիրներ ու շնոր-
հավիրում նրա գալուատը: Ալեքսանդրը, կամենալով անձամբ
տեսնել նրան ու խոսել նրա հետ, սուրբանդակի կերպարանքով
ներկայանում է ամրոցը, սակայն հենց առաջին խոկ վայրկյանին
ինքն իրեն մատնում է: Թագուցու սենյակը մտնելիս նա չի կատա-
րում սուրբանդակների մի քանի սովորությունները.

Սուրբանդակը դռնից ներս մտավ խիզախ,
Թևակ գահը դիմեց առյուծի կեցվածքով.
Իրանին կապած սուրբ ցած չդրեց,
Խնչպես որ կարգն էր սուրբանդակների:

Բացի այդ, Ալեքսանդրը խոսում է շափազանց հանդունքն ու
ինքնավատահ կերպով, որ վայել չեր սուրբանդակին: Նուշարին
հայտնում է, թե ինքը գիտի արդեն, որ ծպտյալ սուրբանդակը
հենց ինքը՝ Ալեքսանդրն է և հաշտ ու խաղաղ կերպով բարեկա-
մական ընթացք է տալիս այդ հանդիպմանը: Ուշագրավ է այս-
տեղ Նուշարի հյուրասիրությունը. նրա հրամանով ամբողութ ճոխ
պատրաստություն են տեսնում, բայց հակառակ դրան, ուտելեղե-
նի փոխարեն Ալեքսանդրի առջև նա գնում է ոսկով, հակինթով,
սուսակով ու մարգարիտով լցված անոթները: Ալեքսանդրը զար-
մացած դիմում է նրան, թե ինչո՞ւ իրեն ուատեֆի փոխարեն թան-
կապին քարեր են մատուցում, չե՞ որ նրանցով շշտանալ չի կարե-
լի: Նուշարին մեղմությամբ պատասխանում է. եթե այդ քարերն
արժեք չունեն, ինչո՞ւ նրանք կուտակելու համար կոհիվ է մղում:
Ալեքսանդրը համաձայնում է նրա դիտողությանը, որ, իրոք, հա-
րսուտություն դիզելու համար չափեաք է արյուն թափել: Ակսվում է
բռն հյուրասիրությունը, որից հետո Ալեքսանդրը՝ բարեկամու-
թյան դաշն կնքելով նրա հետ, վերադառնում է իր ճամբարը: Իր
հերթին Նուշարին էլ փոխադարձար այցելում է Ալեքսանդրին ու
մասնակցում ճոխ խրախճանքին:

Ալեքսանդրը, վերջապես, շարունակում է. իր ճանապարհը.
այժմ նա արդեն կամենում է մի կողմից՝ ամբողջ աշխարհում վե-
րացնել բռնությունն ու կեղեցքումը, արդարություն հաստատել բռ-
լոր երկրներում, մյուս կողմից՝ իմանալ, թե որտեղ են մարդեկ

առավել երջանիկ ապրում: Գրավելով Դերբենդի ամրոցը և պարհապնդք կանգնեցնելով նրա շուրջը՝ նա զնում է Սարիր ամրոցն, որ պահպած էին Քեյ-Խոսրովի գահն ու Զեմշիդ արքայի առասպելական աշխարհացուց գավաթը: Նա նստում է գահի վրա և չուր խմում գավաթով, իսկ Ապողունը (Բուլինաս), որ ուղեկցում էր նրան, գավաթի օրինակով հորինում է առաջին աստեղաշափը (աստրոլաբ): Շարունակելով ճանապարհը՝ Ալեքսանդրը դիմում է գեպի Հնդկաստան: Հնդկական թագավոր Քայլը նրա նամակին պատասխանում է հարուստ նվերներով: ապա՝ նա զնում է գեպի Զինաստան և, ոչ ուժեղ ընդհարումներից հետո, Հաշտության դաշն կնքում շինական խաքանի հետո Ալեքսարձի ճանապարհին նրա մոտ են գալիս Հայաստանի սուրբանդակները և Հայտնում, թե աքիսաղ Դուվալին Ալեքսանդրի օգնությունն է խնդրում ոռուսների դեմ կովելու համար, որոնք հարձակվել են Թերդացի վրա: Կիպրական ստեղներով Ալեքսանդրն շտապում է օգնության հասնել գերված թագուհուն: Ուշագրավ է այստեղ նիզամիի առանձնակի գորգասանքը կիպչակ կանանց գեղնցկության նկատմամբ: Ծ վերջո Ալեքսանդրը հասնում է ուզգմի դաշտ և, ծանոթանալով ոռուսական գորքերի ուժերին ու նրանց մարտունակությանը, համոզվում է, որ այնքան էլ հեշտ չեն նրանց գեմ կովելու: Ի գեպ, Նիզամին մեծ գորգասանքով է խնսում՝ ոռուսների ուզգմական քաջության ու խիզտիւթյան մասին, որ անշուշտ, յուր ժամանակում իսկ կատարված ոռուսական արշավանքի թողած տպավորության արտահայտությունն է: Հայտնի է, որ 1170 թվին ոռուսական տորմիդը կասպից ծովով մտել էր Թուր գետը և դիմում էր գեսիք երկրի խորքը. մյուս կողմից խաղաղները հարձակվել էին Դերբենդի վրա ու գրավել այն Շիրվանշահը միայն Վրաստանի թագավոր Գևորգի երրորդի օգնությամբ կարողացավ հայ մզել խաղարներին, իսկ ոռուսական տորմիդը ունշացավ փոթորկի ժամանակ: Բայց այդ, ոռուսները հարձակվել էին Արքանի վրա նաև առաջ, օրինակ, 946—947 թվերին նրանք գրավել էին Թերդան: Այս հարձակումների ցնցող տպավորության աղղեցությունն է եղել պատճառն անշուշտ, որ Նիզամին, ժամանակագրական Հայտնի խախտում կատարելով, նկարագրում է ոռուսների արշավանքը Ալեքսանդրը, բազմաթիվ տեղություններին իր հետ միացնելով կատարելու առաջնական մասը:

Առաջարտում հաղթում է վերջապես ոռուսներին և աղատում նուշարեկներ:

Ավարտելով այդ պատերազմը՝ Ալեքսանդրն ուղևորվում է դեպի Համբական մշուշի երկիրը, որ գտնվում էր Հյուսիսային րեսուլում: Բայտ ավանդության, այդտեղ էր գտնվում կենաց ջրի աղբյուրը, և ով խմեր այդ ջրից, կանմահանար: Մեծ շարշարանքների գնով նա հանում է մշուշի երկիրը, մտնում է մշուշների մեջ և քառասուն օրվա որոնումներից հետո՝ լսելով խորհրդավոր մի ձայն, որը հայտնում էր, թե մինույն է, նրա որոնումներն ապաժոյուն կանցնեն, դուրս է գալիս այնտեղից ու դիմում դեպի Հայրենիք: Նիզամին պատմում է, որ անմահական ջուրը լուսատու քարի օգնությամբ գտել և խմել է Ալեքսանդրին ուղեկցող զինվոր երգոր, որ և, դրա շնորհիվ, անմահացել է: Պատմում է նաև այդ առանձին կանաչական վարիանտը, ըստ որի երգը իլլասի հետ մշուշի երկրում թափառելիս պատահաբար նստել է այդ աղբյուրի մոտ և հաշել, այդ միջոցին աղ դրած ձուկը նրանց ձեռքից ընկել է ջրի մեջ և կենդանացել, որից և նրանք իմացել են, որ դա անմահական ջրի աղբյուրն է:

Կերաղարձի ճանապարհին Ալեքսանդրը հասնում է մի խորհրդավոր քաղաք: Բնակիչները պատմում են, որ երբեմն երգամի մոտակա լեռից մի խորհրդավոր ձայն կանչում է իրենց, բայց ովքրի բարձրանում են լեռը, այլևս չեն վերադառնում: Ալեքսանդրը փորձում է պարզել գաղտնիքը, բայց արդյունքի չի հասնում: Այստեղ ուղարկված զինվորները նույնպես անվերադարձ կերպով անհետանում են: Ալեքսանդրը վերադառնում է, վերջապես յուր հայրենիքը: Դրանով էլ վերջանում է առաջին մասը:

Երկրուրդ մասում հեղինակը ներկայացնում է Ալեքսանդրին նախ և առաջ իրեն փիլիսոփա: Վերադառնալով Ռում և կարդի գցելով ներքին գործերը՝ նա հոգ է տանում դիտության ու կուտուրայի ծաղկման մասին: Նա հրամայում է հունարենի թարգմանել իր հետ բերած արժեքավոր գրքերը՝ տարբեր լեզուներից, ապա՝ իր մոտ է Հավաքում աշխարհի բոլոր իմաստուններին: Հսքն էլ իր հերթին հաճախ առանձնանում է իր համար կառուցկած իցում և սուզվում խորհրդածությունների մեջ: Այս նախապատրաստական գլուխներից հետո հեղինակը պատմում է տասը պատմության մեջ մասը քաղված է հին հունական ավան-

դություններից (օր. Միդաս թագավորի մասին ավանդությունը, որ վերագրված է Ալեքսանդրին, Արքիմենի սիրո պատմությունը, Հերմես Տրիսմինդսի պատմությունը և այլն): Սրանց հետևում է, եթե կարելի է այսպիս ասել, փիլիսոփայական մասը: Նիզամին ներկայացնում է Ալեքսանդրին Շնդկական գիտունների հետ վարած մինաբանության մեջ Այնուհետև Ալեքսանդրի ներկայությամբ փեճաբանության մեջ են մտնում հունական լոթ նշանավոր փիլիսոփաները, Արիստոտելը, Ապոլոն Տիմասին, Սոկրատը, Պլատոնը, Թալևսը, Պորֆիրը և Հերմենը: Թեև այս հատվածներն իրենց գեղարվեստական կատարելությամբ համեմատաբար ցածր են, բայց շափականց կարեռը են իրենց բովանդակությամբ: Վեճի նյութին է կազմում աշխարհի ծագման հարցը: Նիզամին, հաջի չնատելով ժամանակական տվյալների հետ, Ալեքսանդրի ժողովում հունական փիլիսոփայության տարրերը ուղղությունների ներկայացուցիչներին և քննության առնում նրանց փիլիսոփայական հայացքները: Ցուցաբերելով իր հմտությունն ինչպիս առնաւակ փիլիսոփայական հարցերին, այնպիս էլ, առանձնապիս, հունական փիլիսոփայության՝ նիզամին իր եզրակացությունն է: Հայտնում վիճարկվող հարցի նկատմամբ, այդ եզրակացությունը, որքանով առաջիմ ուսումնասիրված է, հանգում է վնասութիւնական նեպալատոններին ուղղությանը: Երջապատված փիլիսոփաներով ու դիմունական սուլված խորհրդածությունների մեջ՝ Ալեքսանդրը համում է գիտության ժայռագույն գագաթներին: Բայց, ահա, կրկին լսվում է խորհրդավոր ձախնը, որ կոչում է նրան դեպի ճանապարհորդություն՝ մարդկությանը դեպի բարիքի ուղին բերելու նվազ սովորվում է: Նախ նա գնում է դեպի արևմուտք և հաօնում երկրի արևմտյան սահմանին, որը արևպակը սուլվում է օգեկիանուր: Այսուեղ ծիծագեցնող թանկագին քարերով նա մի անմատչելի ամբող է կառուցում օաղիսում: Այնուհետև նա դիմում է դեպի հարավ, ապա՝ արևելք և հասնում է երկրի արևելյան սահմանին, որտեղ ծովը թափում է տիեզերական օվկիանոսի մեջ: Ալեքսանդրը հրամայում է կանգնեցնել այդտեղ պղնձյա արձան՝ վեր պարզած ձեռքով, իրեն նշան ծովագնացներին՝ իրենց ընթացքն այլևս չշարունակելու համար: Այդտեղից վերադառնալով Զինատան և այնտեղ միամսյա հանգիստ վայերելուց հետո՝ Ալեքսանդրը գիմում է դեպի հյուսիս: Հանապարհին նա հանդիպում է

մի ժողովրդի, որ անընդհատ ասպատակությունների է նեթարկվում ավագակարարո մի ցեղի կողմից, և կառուցում է հոկայական պարմակի թշնամիների հարձակումն արգելակելու համար: Ի վերջո նա համարում է դրախտային մի երկիր, ուր ամեն ինչ բացառապես լրակ է: Արդասաբեր է հողը, բարենպաստ կլիման, պատուղներն ու քերքն առատ, իսկ մարդիկ՝ բացարձակապիս երջանիք: Այդտեղ շիման հալածվածներ ու հալածողներ, կեղեգվածներ ու կեղեգիշներ, հարուստներ ու աղբատներ: Մարդիկ ապրում են լիակատար հավաքարության ու աղատության մեջ, մեկը մյուսին իր եղբայրն է համարում օգնել ուղիղներին և, որ կարենը է, իր երաշնորհությունը տեսնում է մյուսների երջանկության մեջ: Դրա շնորհիվ էլ այդ երկրում չկան իշխողներ և իշխանության ներկայացուցիչներ. առանց իշխանության կողմից հաստատված օրենքայցուցիչներ. առանց իշխանության կառավարման է, նույնիսկ հոների էլ արդտեղ հասարակությունը կառավարման է: Նույնիսկ հոտերը հովվիների կարիք չունեն, որովհետև գողությունը, կոդուպումն ու ընշաբաղցությունն իսպառ վերացված են: Մարդիկ շափակում են իրենց պահանջմունքների մեջ, աշխատասեր են և իսասակար հակումներից զերծ, որի շնորհիվ էլ նրանք ազատ են հիմանդրություններից և մենում են խորին ծերության մեջ՝ որոնց իրենց կրանքից: Խշպես Ալեքսանդրին իրենց կրանքը նկարագրող ծերունին է ասում, իրենց մեջ ապօնել թույլ են տալիս միայն իրենց նմաններին, իսկ շարերին վոնդում են: Այսպես, ահա, վերջապես Ալեքսանդրը գտնում է իր որոնած երջանկավետ երկիրը: Իր ամբողջ կրանքում նա երազել էր այդպիսի երկրի մասին ու որոնել: Այժմ երբ նա արդեն գտել էր այն, ցավ է հայտնում, որ շուտ շեկել այդտեղ և յուրացրել նրանց կենսածերը: Բայց ուշ էր արդեն... հորհրդավոր ձախնը կրկին կանչում է Ալեքսանդրին՝ հրամայելով անմիջապես վերադառնալ: Ալեքսանդրը ճանապարհում է դեպի Ռում: Բայց Շահրազուրում հիվանդության ընթացքում գիտունները ոչ մի կերպ չեն կացաւուն հիվանդության ընթացքում գիտունները ոչ մի կերպ չեն կացաւուն օգնել նրան: Ալեքսանդրը զգում է մահվան մերձակությունը և գրագրին թելազորում է մորն ուղղված նամակը, որով հայտնում է իր մոտալուս մահվան մասին: Նույն նամակում նա ինձորում է մորը շվատանալ իր համար: Եթե իր հիշատակին պետք

է անպայման կատարի սգո հանդես, ապա թող սարքի նոխ խընդուրք և հրավիրի միայն այնպիսի մարդկանց, որոնք երթեք չեն կորցրել որևէ մերձեւողի: Նամակն ուղարկելուց հետո Ալեքսանդրը մեռնում է ժամանակի դեմքին: Ստեղծագործությունը վերջանում է Ալեքսանդրի հայրենիքի և յոթ փիլիսոփաների վախճանի նկարագրությամբ: Մի զլուս էլ նիզամին նշիրում է իր մահվան և իր թողած գրական ժառանգությանը վերաբերող խորհրդածություններին:

Ինչպես ասել ենք, իր այս վերջին ստեղծագործության մեջ նիզամին կամեցի է ամբողջապես ընթերցողին հաղորդել իր փիլիսոփայական ու բարոյախոսական հայացքները: Հենց դրա շնորհիվ էլ այս երկն ստացել է դիդակտիկ-փիլիսոփայական բնույթ և այս տեսակետից նման է առաջին ստեղծագործությանը՝ «Դաշտնիքների գանձարանին»: Սակայն, եթե «Գաղտնիքների գանձարանը» զուրկ է մի ամբողջական սյուժեից և նրա մեջ պատմողական կողմը երկրորդական տեղ է գրավում, իսկ առաջնակարգը՝ տեսական քարտզները, խրատներն ու դատողություններն են, ապա այսպէս փիլիսոփայական ընդարձակ դատողությունների, վեճերի ու ժամանելու հետ միասին մեծ տեղ է գրավում պատմողական կողմը: Յուր ընտրած հերոսի մասին ստեղծված ավանդությունները, և հենց նրա կարճատև, բայց փոթորկալից կյանքը լիովին հնարագործություն են տալիս հեղինակին զուգահեռաբար զարգացնել իր երկիրքի թե՛ պատմողական և թե՛ տեսական-փիլիսոփայական կողմը: Սա էլ, իր հերթին, հնարագոր է դարձնում երթեք շթուկացնել ըստեղծագործության հետաքրքրությունը, շվերածել այն շափածո փիլիսոփայական տրակտատի:

Իրը հերոս ընտրելով՝ Ալեքսանդր Մակեդոնացուն, ներկայացնելով նրան իր երթեք կողմերով ու նրա շուրջը համախմբելով ու միայն հույս, այլև ուրիշ ժողովուրդների նշանավոր փիլիսոփաներին՝ նիզամին կարծեն իր առջև նպատակ էր դրել հաշվեարդարի նստել զանազան փիլիսոփայական ուղղությունների հետ՝ մերկություց, և ընդհանուր հայտարարի բերել նախորդ ստեղծագործություններում արտահայտած գաղափարները, ամփոփել նրանք ու վերջին խոսքն ասել՝ մյուս կողմից: Եվ, իրոք, այս ստեղծագործության մեջ նիզամին ամբողջացնում է իր գաղափարախոսությունը, զարգացնում այն ու հասցնում հնարագոր աստիճանին:

Ալեքսանդր էլ հիմնական հարցը հասարակության մեջ գոյություն ունեցող լարիքների քննադատությունն ու նրանց վերացման քարոզն միայն ամբողջացնում իր մեջ պեսմի հերոսը՝ Ալեքսանդր մանգար: Եվ եղանակն է մարմացնում իր մեջ պեսմի հերոսը՝ Եվ, եթե, ասենք Ֆիլրդուախն, արդարացնում էր Ալեքսանդրի նվաճումներն այն նկատառությունը, որ նա իրանական ծագում ունեցեր, աերում էր արեմնյանների արքայական տոհմից, ապա՝ ունեցեր, սերում էր արեմնյանների արքայական տոհմից, թե նա վարում էր ոչ թե նվաճողական արշանաբանությամբ, թե նա վարում էր ոչ թե նվաճողական արշանաբանությամբ ու ապաղատական հզորությունով համար, այլ, ընդհակառակն, ապա ժողովուրդներին ստրկացնելու համար, ամենուրեք հալուծով ազատում էր ստրկացված ժողովուրդներին, ամենուրեք հալուծով ազատում բանականներին, կեղեքիններին ու կողոպտիշտրիքը, պատճում բանականներին, կարգությունը կարգ ու կանոն հաստատում ամեն տեղունքին և մարդագաղաքանի կազմով էլ, առաջ, նիզամին ազատում էր Ալեքսանդրին նվաճողի Ալեքսանդրին արքայական հզորությունով համար հետո հեղինակն արքեն հեշտ կան թագավորի կերպար: Այս բանից հետո հեղինակն արքեն հեշտ կան ազատարար և որպես իր իսկ՝ հեղինակի գաղափարների թրան ազատարար և որպես իրենքն արտուրունների, մեղերումների ու զաղանակի արտահայտիլու: Որպիսի՝ հպատությամբ է պատճում վարդարին սիրի արտահայտիլու: Որպիսի՝ հպատությամբ է պատճում հեղինակը Ալեքսանդրի արշավանքը բարբարոս զենքինների դիմ, հեղինակը հեղինակը արքայակարար տեղեւելից սրաբիսի՝ փառարանությամբ է խոսում ավագակարար հեղեւելից հապածված երկրի շուրջը պարփակներ կանգնեցնելու և այլ բազում ամբողինակ դեպքերի մասին: Այդ բոլոր դեպքերում էլ Ալեքսանդրը հանդիս է զալիս իրեն խեղճերի, թույերի ու հաւածվածների պաշտպան, և բռնականների, անիրազար օւշեկների պատճող: Իսկ այդ իրավունք էր տալիս հեղինակին ու միայն սիրու իր հերոսին, ոչ միայն գովաբանել նրան, այլ և հպատականալ նրա գործերով: Իր բոլոր գործերով Ալեքսանդրը պետքում ներկայանում է մեղ իրեն միայն դրական հերոս, նա պետքում ներկայանում է մեղ իրեն միայն դրական հերոս, նա պետքում պատճում է իրավական կամ փառասիրական նկրտում՝ կաթիլ արյուն շահասիրական կամ փառասիրական նկրտում՝ Միայն շարիթին ու բռնությունը վերացնելու համար է նա ներով: Միայն շարիթին ու բռնությունը վերացնելու համար է նա սուզը հանում պատճում է իրավական կամ փառասիրական արյունահաղությունը, ապա նա կանգ է հանդիս է խոսակեն արյունահաղությունից, ապա նա կանգ է

առնում ոչ մի միջոցի առջև Այդակս նա խուսափում է բազմաթիվ անօնեղ զինվորների արյունը թափելուց՝ սպանել տալով Դարեհին, կամ փոքրիկ ընդհարումներից հնտո՛ հաշտության եզր գտնելով շինական խափանի հետ և վայս բոլոր դեպքերում Նիդամին իր հերոսի հետ է և ուրախանում է արյունահեղության խափանումից: Բայց այդ բոլորը դեռ չեն բավարարում հեղինակին: Ալեքսանդրը ընտրյալ թագավոր է, նա իդեալական դեկավար է, բայց նրա հաստատած կարգերը դեռևս լավագույնը չեն: Ինքը, Ալեքսանդրն է որոնում է մի ավելի երջանիկ երկիր, ավելի արդարացի կարգեր: Ծվ, ահա, Նիդամին իր հերոսի հետ որոնում ու գտնում է այդ երջանկավետ երկիրը՝ ուստոպիական հյուսիսային երկիրը: Սրանով արդեն Նիդամին հասնում է իր սոցիալական հայացքների զարգացման վերջնակետին: Նա հանգում է, վերջապես, այն տեսակիտին, որ հասարակության միջից կվերանան բռնությունները, կեղեգումներն ու անհրավությունները այն ժամանակ միայն, երբ հասարակության բոլոր անդամներն ապրեն իրենց աշխատանքով: Երբ մի բուռն իշխանավորները երկիրն իրենց փառասիրական ու շահասիրական ձգումների բավարարման աղբյուրը շդարձնեն: Հասարակության յուրաքանչյուր անդամը պետք է հոգա մյուսների համար այնպես, ինչպես իր համար: Ուրիշի շահերի պաշտպանությամբ պաշտպանիր քո շահերը. այս սկզբունքի վրա է հիմնված Նիդամի ուստոպիական հասարակությունը, և այս սկզբունքն է քարոզում ինքը՝ Նիդամին: Այս է, ահա, նրա վերջին խոսքը, որով վերջացնում է իր ստեղծագործությունն ու իր գաղափարախռությունը:

Սակայն այս ստեղծագործության մեջ Նիդամին իր ուշադրությունը միայն մարդկության սոցիալական կյանքի վրա չի բևեռել: Նա քննության է առել նաև զուտ փիլիսոփայական հարցեր, ինչպես կյանքի ծագումը, աշխարհի գոյացումը և այլն: Դրանցից առավել կարևորն է մահվան պրոբլեմը: Հայտնի է, որ մարդկությունը դեռևս վաղնջական ժամանակներից մտածել է մարդկային կյանքի երկարացման, մարդու անմահացման մասին ու որոնել դրա միջոցը, բայց չգտնելով այդ միջոցը հորինել է բազմաթիւ լինենդներ՝ հավիտնական զրի, առանձին հերոսների անխողելիության, կենսառու բույսերի մասին: Նիդամին էլ այդ հարցին պետքադառնում է այստեղ: Ալեքսանդրը որոնում է անմահական

ջարը՝ գնալով մշուշը երկիրը: Սակայն Նիդամին այստեղ էլ իրականն է եւակետ ընդունում: Ալեքսանդրի բոլոր որոնումները ապարդյում են անցնում: տուքը տալով մահմեդական կրոնին՝ Նիդամին հիշում է միայն ըստ այդ կրոնի անմահ եղագի լեզենդը: Մինչդեռ իր հերոսը, իրական մարդը մահկանացու է և այդպիս է մասում է: Եվ որքան ցնցող է ու հուզի այն պատկերը, երբ հազմական հերոսը, որ իր ոտքի տակն էր առնել ամբողջ երկիրը, որ նույնիսկ քևեռներն էր նվաճել, մահվան տապապի մեջ հեղուարով է դիտում բժիշկների փորձերին՝ մահվան առաջն առնելու համար: Մահը անխուսափելի է, — այս է Նիդամիի եզրակացությունը, — բայց մեռնելուց հետո էլ մարդ ապրում է իր գործերով: Այսպիս է ավարտում նա իր մտորումները, արդպես է նկարագրում նաև իր մահը՝ իրեն ավանդ հանձնելով հավերժության իր հոգական ստեղծագործությունը:

Լիրիկան: — Ինչպես մենք ասել ենք արդեն, Նիդամիի թողած գրական ժառանգության մի մասս են կազմում նրա քնարական բանաստեղծությունները: Հին աղյուսների տված տեղեկությունների համաձայն Նիդամիի քնարական բանաստեղծությունները շափառանց շատ են եղել, սակայն մեզ հասած՝ նրա քնարական բանաստեղծությունների ձեռագիր ժողովածումները պարունակում են շատը երկուազար տող: Յավոր սրտի այդ թիւն էլ հարգի հղածին չափ ուստումասիրված չէ և, որ ավելի զիսավորն է, դիտականքնառադատական հրատարակությամբ առաջմն չույս չի ընծայված: Այդ է պատճառը, որ նույնիսկ այժմ էլ, Նիդամիի մասին խոսելիք, հիշում են միայն նրա պետմերը. մինչդեռ նրա քնարական բանաստեղծությունները ևս իրենց գեղարվեստական արժեքով արժանի են մեծ ուշադրության: Այս համառոտ շարադրանքով՝ մնարանալով այդ բանաստեղծությունների մանրամասն ու բազմակողմանի վերտուության մեջ, բավականանանք առաջմն Նիդամիի լիրիկացի մի քանի բնորոշ կողմերի մասին խոսելով և բնութագրելով այն ընդհանուր գծերով:

Նիդամիի լիրիկայի մեծագույն մասն են կազմում սիրային բանաստեղծությունները՝ գաղեկները: Բանաստեղծը խորը հուզականությամբ ու բացառիկ անկեղծությամբ երգում է սերը, զեղում իր ապրումները: Ինչպես ճիշտ կերպով նկատել է արեհադես թիրառելու, այդ բանաստեղծությունների յուրաքանչյուր տողը

տոգորված է Նիզամիի հատուկ անկեղծությամբ ու գգացումների խորովաճառք: Այդ նույնը վերաբերում է նաև բանաստեղծությունների գեղարվեստական կողմին: Բանաստեղծությունները մեջ էլ նա համեմէն է գալիս իրու մեծ վարպետ: Խնչակն ինքը բանաստեղծն էլ վկայում է, իր գաղեների զգալի մասը գրել է դեռևս վազ երիտասարդության տարիներին, միայն մի քանիսն են գրված հնուագյում, որ և հաստատվում է հենց գաղեների բովանդակությամբ: Եվ, սակայն, զնում երիտասարդ հասակում գրած այդ գաղեներն էլ աշքի և ընկնում չեղվի ճշտությամբ, նույր, գեղեցիկ պատկերներով ու համեմատություններով և բանաստեղծական, հատկապես շափական արվեստի կատարելությամբ: Առանձնապես գաղեների մասին խոսելիս պետք է նկատի ունենալ մի հանգամմանք: արենելում ատեղծված գրական այսնության համաձայն գաղենի համար չի պահանջվում բովանդակության միասնականություն: Խնչակն հաստատում են հենց արենելիի անցյալի տեսաբանները, զագլի յուրաքանչյուր բմթը (երկուողը) պետք է կազմի մի վերջացած ամբողջություն՝ ըստ բովանդակության: Գաղելի ամբողջությունն ու միասնությունը ստեղծվում էր գերազանցապես լինելու միատեսակ հանգով և շաբով: Արա Հետևանքն, ինչպես հարանի է, այն եղավ, որ տաճերկու-տասներերորդ դարերից արդեն, բանաստեղծների ուշադրությունը զիսավորապես կենտրոնացնում է ձևական ու չափական տեխնիկայի վրա, իսկ բովանդակությունը հնարին տեղն է բռնում: Այս՝ արենելիի գրականության համար ընդհանուր դարձած հատկանիշներից մեկն է, որ իր ծայրահեղությանն է համում տառնհինդ-տասնվեցերորդ դարերում, եթե չափական արժմատը զագեների մեջ դառնում է արդեն ինքնապատակ մի բան: Այս կողմից ևս, ինչպես ճիշտ կերպով դիտել է թերթելու, Նիզամիին կշտամբել չի կարելի: Ամբողջ ժողովածքում դժվար է գտնել մի առող, որ ինքնանպատակ լինի, ծառայի սոսկ ձևական կատարելության, իրու ամելորդ պերճաբանություն: Ընդհակառակն, Նիզամիի գաղեների յուրաքանչյուր տողը հագեցած է շատ խորը, բայց սեղմորեն արտահայտված բովանդակությամբ: Իրու առանձնապի արժանիք պետք է ամելացնել, որ բովանդակության տեսակետից բերթերի անկախությունն ու, մանավանդ, անշատվածությանը նկատելի չեն: Ցուրաքանչյուր գաղել ունի յուր ամբողջական, միասնական բովանդակությունը, որի հիմքում ըն-

կած է մի որևէ հույզ կամ խոհ, որ զարգանում է թեյթ առ թեյթ և ամբողջանում է, միաւ ամբողջ գաղենով: Այս մի այնպիսի վարպետություն է գաղեների գրելու արվեստի մեջ, որին արևելքի բանաստեղծներից ըշերն են հասիլ: Սակայն, հակառակ դրան: բուրժուական արևելագետները սովորաբար անտես են առնում Նիզամիի բնարերգության այդ գրական կողմերը և, առանց հանգամմանորեն ուսումնասիրելու այն, արժնագրկում: Դեռ ավելին, նույն իսկ այն դեպքերում էլ, եթե խոսում են դրա մասին, ապա անպատճանորեն կամենում են գաղեների մեջ էլ տեսնել սովորական աշխարհայացքը: Նրանք հայտնապես արվեստական կերպով փորձում են մեկնաբանել Նիզամիի սիրո երգերը սովորական այլարանությամբ: Մինչդու ամենաթիթեակի ըննությունն, անդամ, բավական է ցույց տալու համար, թե այդ գաղեների այլարանական մեկնաբանությունը միանգումայն մտացածին է: Հայտնի է, որ սուփի բանաստեղծների գաղենմարի մեջ այլարանորեն գործածվող անց, սիրելի և նման բազմաթիվ բառերը զուրկ են կոնկրետությունից: սիրո գովքն էլ նրանց մեջ վերացական է, անմարմին ու անիրական: Հենց այդ պատճառով էլ միանգումայն տեղին է դրանց այլարանական մեկնությունը: ավելին՝ միայն այդպիսի մեկնաբանությունից վերջապես, այդպիսի գաղեների վերցաբանում սովորաբար դրվում է նաև այլարանության մեկնությունը՝ պատկերավոր ձևով կամ ուղղակի կերպով, այնպես որ այլևս որևէ կասկածի հնահակած կարող լինել նրա սովորական բովանդակությունը: Նիզամիի գաղեների մեջ մենք այդպիսի բան գտնել չենք կարող: Նրա գաղեններում երգված սերը միանգամայն կոնկրետ է, մարդկային, և որևէ այլարանական մեկնության տեղինք չի տալիս: այն խորն զգացումները, այն անմիջականությունն ու անկեղծությունը, որոնք հատուկ են նրա գաղեներին, սովորական որևէ այլարանության շեն կարող ներդաշնակել: Ի վերջո, Նիզամիի գաղեների բովանդակությունը վերցաբան չէ, և նրանց այլարանական մեկնությունը ոչ թե կոնկրետացնում է, այլ, ընդհակառակը, վերացական է գաղունում նրանց բովանդակությունը: իսկ այս ցույց է տակիս, որ բուրժուական արևելագետներն այստեղ էլ առաջնորդվում են մի հայտնի տեսներն ու նկատման գործական արդյունական գործականը, որ կա Նիզամիի զաւ-

զելներում և ամեն տողին արհեստականորեն տալ կրոնական բովանդակություն:

Մեր ասածները փաստերով հաստատելու համար իբրև նմուշ քերենք Նիզամիի գաղելներից երկուառ.

Դյուզալ, քննելուց ոչ մի շահ չկա, եկ ուրախանանք
մինչև առավոտ:
Ուրիշ գիշերներ այդ քնի տեղակ քնով կծփանք
մինչև առավոտ:
Մերթ աշքով-ումբով քեզ կփայփայեմ, մերթ քեզ իմ սիրո
օթակը կառնեմ.
Մերթ քեզ տեղ կտամ իմ սրտում, կզդաս դու սիրո քնըշանք
մինչև առավոտ:
Դու մի տիկնիկ ես՝ նուշ աշխնճով, գիշեցկուիչի ես
2աքար 2ուրթերով,
իսկ գինովներին նուշն ու շաքարը մազա է, բերքերանք
մինչև առավոտ:
Երեկ մինչ գիշեր քեզանից բաժան ես գլուխս էի թակում
ծով վշտից:
Այսօր, յար, եկար, գլխիս թագ դրիր, շունեմ վիշտ,
առանջանք մինչև առավոտ:
Իմ ջանք ես քեզ մատաղ արեցի, — ասի, այս քնքով ձեռքը
քոնն է, յա՛ր,
Սիրո՛ւ, զառ դցի՛ր, ինձ հետ միասին խաղա՛, նարդի տանք
մինչև առավոտ:
Մազդ ուրոիր հանց ապաշխարանք, մինչև ուզ գիշեր տուր
ինձ համբուլիներ,
Ապաշխարանքը շաղ տուր վարսիդ պես, խմեմ գինին թանի,
մինչև առավոտ:
Այս գիշեր նստիր, դու ականջ արա Նիզամու հնչեղ
քաղցր երգերին,
Թող քո ականջի մատանին շընկնի ուրիշ ոչ մի հանդ
մինչև առավոտ:

* * *

Սիրահարներին, որպես առյուծներ, նա թուխ աշերով
որսում է էլի,
եվ ով առյուծի սիրու ունի սիրող, զրկում է սրտից,
յարից սիրնից:
Հոնքերի նետը աղեղին դնում, լարում է, ձգում, բայց
չի արձակում:
Օ, հրաշք, նալիր, նա ինձ խոցում է, թեև մի նետում
նետերը ձեռքի
էսօր Սանամիս երեսը տեսա, վշտից շապիկս ես ծվատեցի.
Խւլու աշխարհում շփորձված գինին գինովը ընում է
ինձ սքանչեցի:
Երբ քո երկաթն որտում փնտրում եմ հավատարմություն,
նվիրվածությունի,
Ոնց կազդեն բյուրեղ իմ սրտի վրա պարսաբարերը սիրո
պաշտեցի:
Ես ամեն մի օր հիշատակում եմ գիշերներն անուշ
ժամադրության,
Դու ամեն գիշեր օրերս ես համրում, պահում հաշիվը
սրտիս զարգեցի:
Թեև յարի հետ հանդիպելը շատ նեղիլ է, ճնշող, երգի՛ւ
Նիզամի,
Բայց ով վարդեր է կյանքում որոնում, նա հանդիպում է
նաև փշերի:³

Այսպիսով Նիզամիի քնարական բանաստեղծությունները մեծ
արժեք են ներկայացնում թե՛ իրենց խորը հուզականությամբ, թե՛⁴
որվանդակությամբ, և թե՛ բանաստեղծական արվեստի կատարել-
ությամբ: Մեծ բանաստեղծը դրանց մեջ էլ հարազատ է մնացել
իր սկզբունքներին, մասնավորապես սիրո ու բարորականության
հարցերում և քարոզէլ է իր ժամանակի համար առաջադիմական
դադարիաներ: Ահա թե ինչու սովետական արևելագիտությունը
գտնում է, որ նրա լիրիկան նույնպես մեծ արժեք է ներկայաց-

նում, որ գնահատել նրա ժառանգությունը, անտես առնելով լիքիկան, նշանակում է սովորի տակ թողնել այդ ժառանգության մի արժեքավոր մասը և, հետևաբար, թորի գաղափար կազմել նրա ձաւին:

Ամփոփում.— Այժմ, երբ մենք ծանոթացել ենք նիդամիի ամբողջ գրական ժառանգության բովանդակությանը, հնարավոր է ի մի բերել այդ առանձին հատվածներն ու ամբողջական գաղափար կազմել այդ ժառանգության արժեքի մասին: Եթե նիդամիի առանձին ստեղծագործությունների, հատկապես հինգ պլումների մեջ այլուժերի ու կառուցվածքի տիսակետից ընդհանուր բան գրեթե չկա, առաջ գաղափարական տեսակետից նրանք սերտորեն շաղկապատճեն իրար և կազմում են մի անխախտելի ամբողջություն: Իր բոլոր ստեղծագործությունների մեջ էլ նիդամին հանդիս է գալիս իրեւ իր ժամանակի մեծ մռածող ու բարոյախոս և հետեղական կերպով քարոզում է յուր գաղափարները: Նիդամին լիովին գիտակցում էր զրականության գաստիարակիշ գերը հասարակական կյանքում: Դեռ ավելին, հետևելով իր ժամանակի հայեցակետին, նա ևս գտնում էր, որ գրականությունը հասարակական կյանքի վրա ազդելու վենք է և իր ստեղծագործությունների մեջ նպատակ է դրեւ իր քարոզները, խրատներն ու քննադատությունը ժառայիցնել կյանքի վերափոխման, ժողովրդի համար բարեկեցիկ կյանք ստեղծելու գործին:

Իր ստեղծագործությունների մեջ նիդամին շոշափում է հասարակական կյանքի բոյոր կողմերը: Սակայն կարևորը, հիմնականը՝ իր իսկ հասարակական կյանքի հոռի կողմերի քննադատությունն է ու հասարակության համար երջանիկ կյանք ստեղծելու բարողը: Իր բոլոր երկիրում առկա է սոցիալական բողոքը, հասարակական շարիքի անողոք քննադատությունը, իր բոլոր ստեղծագործությունների մեջ էլ նա հանդիս է եկել իրրի բռնության ու կեղեքման անհաջող թշնամի: Սրա լավագույն ապացուց է հենց այն, որ նա իր ստեղծագործությունների մեջ և ոչ մի առիթ բաց շի թողնում կյանքում պոյություն ունեցող անիրավությունները, անսանձ կեղեքում ու կամայականությունները ֆնադրատելու համար: Հասարակական կյանքի ամենախոշոր արատը, որ նա քննադատում է հատկապես «Գաղտնաիքների գանձարանում», «Ցոթ գեղեցկությներում» և «Խորսնդար-Նամենում», ֆեոդալական վերնախավի

կողմից աշխատավոր ժողովրդումն է: Նա անողոք կերպով մերկացնում է իշխողների սանձարձակ կամայականությունները, անլուր կեղեքումն ու ճնշումը՝ աշխատավորների նկատմամբ: Վկա լինելով բռնակալների շահագործմանը, նրանց անարդարություններին՝ նիդամին ըննադատության է ենթարկում նրանց տմարդի արարքները և բարողում «դարձի գալ», սովորել արդարություն ու կառավարել երկիրն արդարությամբ: Նրա սուր ըննադատությունից չեն աղատվում ո՛չ իր ժամանակի տիրակալները, ո՛չ պարսկական էպոսում բարության ու արդարության տիպար համարված Խոսրով Անուշիրվան արքան, և ո՛չ իսկ Ալեքսանդր Մակեդոնացին, որին նա ներկայացնում է իրեւ իդեալական թագավորի տիպար: Ինչպիսի ցասումով է խօսում նա սուբյան Սանչարի, Խոսրով Անուշիրվանի, կեղեքից թագավորի շարադրությունների մասին «Գաղտնաիքների գանձարանում»: Խնչպիսի գայրույթով է պատմում բռնակալ վեղիրի մասին «Ցոթ գեղեցկությներում» և ինչպիսի բոլոր կա յոթ բանտարկյալների պատմովածքներում: «Խարանդար-Նամեն» բովանդակությունը շարադրելիս մենք տիսանք, որ հեղինակն Ալեքսանդր Մակեդոնացուն ներկայացրել է որպես իդեալական կերպար: Բայց նույնիսկ Ալեքսանդրը նիդամիի ստեղծագործության մեջ հանդիս չի գալիս առանց թերության, նույնիսկ նա խոստավանում է, որ ինքն էլ, իրեւ թագավոր, ունի խոտելի արարքներ, ասելով՝

«Մածուկ պետք է մնա մեր գաղտնիքը,
եթե բացենք մեր ներսը,
Ապա գարշահոտությունը ողջ աշխարհը կբռնի»:

Այս քննադատությունը տիրակալների անիրավությունների ու կեղեքման նկատմամբ վերջապես ուղղակի բողոքի է վերածվում, և հեղինակը իր ամբողջ ատելությունն ու թշնամանքը ամփոփում է այն մարտական բառերի մեջ, որոնցով բռնություններին հլությամբ շննթարկվելու կոչ է անում: Ահա այդ տողերը:

«Խաչո՞ւ հանձնում ես հարվածի պարանոցդ հուզորեն,
Խնչո՞ւ տանում ես յուր ու մունչ՝ բռնությունը անօրին
եղի՛ր գու փուշ, պահի՛ր մեջքիդ սլաքները սրասալը...»

Խարեւ գրանից չի կարելի եզրակացնել, թե նա քարոզել է ապօտամբություն, կամ նման մի բան: Ոչ այդ տողերով պառապես նա գոնում է, որ շպեսոր է բռնակալների անհրավությունները տանել լուր ու մուց, որ բռնակալին պետք է պատժել: Իսկ այս քարոզով նա համադրվում է սուֆիներին, և կազմում Ախիների հետ, որոնց մասին խոսել ենք: Ինչ վերաբերում է հասարակական կյանքը փոխելուն, ապա այդ հարցում նրա հայացքների մեջ պահի էվոլյուցիա է կատարվել: Իր առաջին պոեմի մեջ՝ «Գաղտնիքների գանձարանում» նա թեև խստորեն քննադատում է բռնությունն ու անհավասարությունը, այնուամենային ֆեռական հասարակական կարգը չի ժխտում: Նա նույնիսկ արդարացնում է գույքային անհավասարությունը, իշխողների և իշխողների գոյությունը, համարում այդ բնական երևույթը, քանի որ հաւաքութը կարգած է մարմնի շափառված և մարդու աստիճանը համապատասխանում է նրա արժանիքներին: Այդպիս էլ, իր առաջին պոեմում նա հանդիս է գալիք իրեն թագավորական միահեծանիքնանության կողմնակից, քանի որ՝ «երկու գլուխի շպիտի լինի», որովհետև մեկը կկտրենա: Սրանով էլ պայմանավորված է նրա սկզբունքը՝ հասարակության համար երջանիկ կյանք ստեղծելու մասին: Նա խստորեն քննադատում է բռնակալներին, մերկացնում նրանց անհրավություններն ու կամայականությունները՝ ցուցույթելով յուր հասարակարգի խոցերը: Բայց այդ խոցերը բռնման համար նա չի քննադատում հասարակության կառուցվածքը, մեծում փոխել, այլ կամնում է բարելավել այն: Այս պատճառով էլ, եթե մի կողմից նա քննադատում է բռնակալներին, մյուս կողմից էլ քարոզում է նրանց՝ «գարծի գալ», կառավարել երկիրը արդարությամբ: Այսպես, պատմելով Անուշիրվանի մասին, նա պատճառ ավարտում է ամեղով, թե Անուշիրվանը, բումբը զրուցից հուզված, մտածեց իր անհրավությունների մասին, որպատճառեց իրեն և այնուհետև եղավ արդար թափավոր նույնպեսի գործը է կատարում նաև կեղերի թագավորը. նույն է կատարում նաև Բահրամ Դուրը «Յոթ դեղեցկուհիներում»: Այսպիսի շրինակներ ցուցադրելով՝ նիզամին կամնում է, որ տիրակալները խուսափեն անհրավություններից ու կեղեգումից և ուղղվեն: Նույն նստառակին են ծառայում նաև օրարին, օրարին թագավորների կերպարները, որոնց հեղինակը ներկացնում է իրեն օրինակելի

իշխողներ և քարոզում՝ հետևել նրանց: Իրեւ այս վերջնի մարմնացում կարելի է հիշել Ալեքսանդր Մակեդոնացուն: Այսպես, ուրեմն, իր կյանքի առաջին լոջանում նիզամին գոնում էր, թե բարի խթատներով ու հորդորներով կարելի է ազդել բռնակալների վրա, ուղղի ճանապարհը թերել նրանց և դրանով իսկ ստեղծել հասարակության համար երջանիկ կյանք, վերացնել շահագործումը, բռնությունները, անիրավություններն ու կյանքի բոլոր դանությունները: Այդ նպատակով էլ նա մի կողմից քննադատում էր բռնակալներին, բարի խթատներ ու պատմիրաններ տալիս տիրակալներին, մյուս կողմից իրեւականացնում անցյալը, ներկայացնելով այդ անցյալն իրեւ երջանիկ ժամանակ, իսկ անցյալի թագավորներին՝ իրեւ արդարության մարմնացում, որոնք ստեղծվել են «պատակների հոգսերը թիթեացնելու և ոչ նրանց կեղեքելու համար»: Սակայն հետագայում, կյանքի դառն փորձով նիզամին համոզվեց, որ իր և իր նման հազարավորների քարոզներն ու խրատները չեն կարող վերացնել հասարակական կյանքի լարիքները, քանի դեռ գոյություն ունեն իշխողները և իշխովողները, քանի գեռ գոյություն ունի գույքային անհավասարությունը: Կյանքը ինքնին հերթեց նրա սկզբնական համոզմանը Եվրոպա, Եվրասիա, ուստի համարական մասնակիցները և այլ անառ սկզբանական ապահովությունները նաև որոնում է գտնում է երջանկավետ կյանքը: Նրա իրեւականացրած հերոսը՝ Ալեքսանդրը, որ ամենուրեք վերացնում է լարիքները, անհաջող կոփէ և մղում բռնության ու կեղեգումների գեմ, իր ճանապարհորդությունների ընթացքում հասնում է ուսուպիական հյուսիսային երկրին, ուր մարդիկ ապրում են կատարելավիս աղատ ու երջանիկ, ուր չկա պետություն, չկա գույքային անհավասարություն, զոյլություն չունի շահագործումը, որովհետև գոյություն չունի հասարակության դասակարգային երկատվածությունը՝ շահագործուների և շահագործվողների միջև: Այսպես, ահա, քննադատելով յուր հասարակության խոցերը և որոնելով երջանիկ կյանքի հիմունքները՝ իր կյանքի վերջում նիզամին հանգում է ուսուպիային: Նա յուր ժամանակի հասարակարգին հակագուռում է ուսուպիական հասարակաբազր, որ հիմնված է հավասարության ու աղատության սկզբունքների վրա: Այսպիսով՝ իր վերջին ստեղծագործության մեջ նա հանդիս է գալիս որպես մարգանց կատարյալ հավասարության կողմնակից և թացառում է ոչ միայն միապետությունը, այլև՝ առհասարակ պետությունը:

Ինչ վերաբերում է այդ ուսուպիային հասնելու միջոցին, ապա այս հարցում նիզամին իշխալիստական այն սկզբունքին է, թե կարելի է հասարակության կառուցվածքը փոխել բարոյական կատարելության հասնելով։ Այլ բան սպասել նրանից չէր էլ կարելի, իհարդիք։ Նա կրում է յուր գարաշրջանին ու հասարակարգին հատուկ սահմանափակածությունը և ոչ ճիշտ հայցեցակետը՝ հասարակության ու հասարակական կյանքի մասին։

Իր բոլոր ստուդիագործությունների մեջ էլ նիզամին հանդես է գալիս իրեն մեծ հումանիստ և ժողովուրդների համերաշխության քարոզիչ։ Նրա երկերում չի կարելի գտնել որևէ ժողովրդի նկատմամբ արտահայտված թշնամանք։ Ընդհակառակն, ներկայացնելով իր երկերում բաղմաթիվ ժողովուրդների ներկայացուցիչների կամ հնաց բուն ժողովուրդներին, նա աշխատում է ցույց տալ նրանց դրական կողմերը, Միայն մի հարցում նա մեղադրում է այս կամ այն ժողովրդին։ այն գեղաքում, երբ որևէ ժողովուրդ փորձում է զենքի ուժով ստրկացնել մի ուրիշ ժողովրդի։ Այդ դեմքում էլ սակայն, նա ըստ մնձի մասին մեղադրում է տիրակալներին, որոնք փառքի ու հարստության համար արյունահեղ պատերազմներ են հրահրում։ Հենց այս նույն տեսանկյունով էլ նա դիտում է պատերազմները։ Նա քարոզում է հաշտության ու խաղաղության և պնսահման հիացմունքով է պատմում այն բոլոր դեպքերի մասին, երբ վերահաս պատերազմը կանխվում է հաշտությամբ։ Այդպես է նկարագրված Ալեքսանդրի ու շինական խաքանի հաշտությունը, այդպես է նկարագրված Ալեքսանդրի ու Նուշարեի բարեկամությունը և այնու նույնիսկ Ալեքսանդրի կողմից Պարեհին գավաճանների ձեռքով սպանել տալը նա հիմնավորում է այն նկատառումով, որ դրանով փրկում էր հազարամույթը պինդորների կյանքը։ Ընդհանուր առմամբ նիզամին դեմ է պատերազմներին և այդ արտահայտել է ամեն առիթով։ Մակայն կամ մի պատերազմ, որ նա անհրաժեշտ է համարում։ այդ սուար լծից ազատվելու համար մղված պատերազմն է, անիրավությունները վերացնելու համար մղված պատերազմը։ Միայն դրանով է արդարացնում նա Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները։

Իր ստեղծագործությունների մեջ նիզամին շափականց մեծ տեղ է հատկացնում բարոյախոսության նվազ այդ պատահական չէ, Մենք ասեցինք, արդեն, որ նրա համոզմամբ, կյանքը պետք է

փոխել բարոյական կառարելության հասնելով։ Դրանով էլ պայմանավորված է նրա բարոյախոսությունը։ Հասարակության բարոյական կատարելությունը առաջնակարգ տեղը նա համագնում է գիտությանը և դաստիարակությանը։ Ուկայի և Մեջնունից մասին խոսելիս մենք արդեն, թե ինչ էր պահանջում հորից՝ որդիների դաստիարակության հարցում։ Այստեղ ավելացնենք միայն, որ նա իր կողմից քարոզում է ազնվություն, հոգատարովթյուն ուրիշների նկատմամբ, աշխատասիրություն։ Համեստություն ու շափավորություն։ Մարդ պետք է օգտակար լինի Հասարակությանը, այլապես նա պիտանի չէ կյանքում։ Ինչ վերաբերում է գիտության խնդրին, ապա նա գտնում է, որ երկրի զարգացման ու հոգորության գործոններից հիմնականը գիտությունն է։ Այդ բանի համար, իբրև օրինակ, նա հիշում է հին հունակին, առակայի, թե հույնները իրենց հղորությամբ պարտական էին գիտության զարգացմանը՝ Տույնաստանում, և որ հույնների փառքը անմա՞ս է նրանով, որ ամբողջ աշխարհը նրանցից է գիտություն սովորել։ Այդ նույն միտքը նա զարգացնում և արտահայտում է Ալեքսանդրի կերպարով, որի դրական հատկանիշներից մեկն ինչպես ասեք ենք, իմաստությունն էր։

Նիզամիի խրատների մեջ կարևոր տեղ է գրավում շարության գեմ կռվելը։ Նա գտնում է, որ չար մարդկանց պատժելը անհրաժեշտություն է։ ավելին, անպատճ թողնել շար մարդկանց, նշանակում է վնասել արդարներին։ Այս սկզբունքը նա քարոզում է ամեն պատեհ առիթով։ Նույնիսկ օթոթ գեղեցկուհիներին յոթ պատերազմներում, որոնք ավելի հերթականին, թեթև ու հանգստացուցիչ տրամադրությամբ են համակված, առկա է այդ սկզբունքը։ Հեղենք և Շարի պատմությունը, որի մեջ եները իր մոտ բերված հանցագործին՝ Շարին՝ ազատում է, բայց թագավորածութեանը սպանում է նրան։ Այս սկզբունքի մեջ նիզամին տեսնում է հասարակական շարիների վերացման կարևոր մոմենտներից մեկը։

Ի վերջո նիզամիի բարոյախոսության մեջ կարևորագույն տեղ է զբավում ընտանիքի, սիրո և, հատկապես, կնոջ հարցը։ Առանձին ստեղծագործությունների վերլուծման ընթացքում մենք տեսնեաք արդեն, որ նա կողմնակից է ազատ սիրո սկզբունքին և գանձում է, որ ամուսնությունը պետք է հիմնված լինի պատ

ընտրության, փոխադարձ ու ամրավաճան սիրո վրա։ Հակագրքելով
մահմեղական աշխարհում ընդունված և նուրանով արտօնածած
բազմակնության սովորության՝ նա քարոզում է միակնություն,
ամփոփելով իր տեսակետը հետևյալ խորքերի մեջ։ Թագմագին
ժարդը, վերջապես մենակ կմնա։ Սակայն կոչ հարցուած նա է՝
ափելի առաջադիմական հայացքներ է պաշտպանում, գտնելով, որ
կինը կարող է և պետք է տղամարդուն հավասար դիրք ունենա,
պետք է օգտվի այն բոլոր իրավունքներից, որոնք տղամարդկանց
մենաշնորհն են դարձելու նա գտնում է, որ կինը կարող է նույնագույն լուրջ հասարակական գործի լինել, որքան և տղամարդը։ Այս բանը
նա հաստատում է այնպիսի կանացի կերպարներով, որպիսիք են
Միհին-Բանուն, Շիրինը, Նուշաբեն և այլն։ Այս համոզմումը
միջնադարում, մասնավանդ մահմեղական աշխարհում, բացարձա-
կապես հակադիր էր կոչ նկատմամբ եղած հասարակական վե-
րաբերմունքին։ Իսկ այդ նշանակում է, որ նիզամին բոլոր հարցե-
րում էլ իր սկզբունքներով պաշտպանել է առաջադիմական հա-
յացքներ։

* * *

Խոսելով առանձին ստեղծագործությունների մասին՝ մենք
աշխատել ենք համառոտակի բնութագրել թի՝ առանձին կերպար-
ները, և թի՝ ամբողջ նրակի գեղարվեստական արժեքը։ Այժմ հա-
մառուտակի խոսենք նիզամիի ստեղծագործական մեթոդի, նրա
բանաստեղծական արվեստի ու լեզվի մասին՝ ամբողջությամբ
վերցրած։ Առանձին հերոսների կերպարների վերլուծությունը
նկատի առնելով, անգամ, հեշտ է եղակացնել, որ նիզամին ոռ-
մանտիկ է։ Իրոք արևմելքի ժողովուրդների գրականության պատ-
մության մեջ նա հայտնի է որպես սիրային ոռմանտիկայի խորշ-
րագույն ներկայացուցիչներից մեկը։ Լեզվին, Մեջնունը, Խոսրովը,
Զարհադը, Շիրինը, Բահրամ Գուրը և հերոսների մի ամբողջ շարք
անկասկած ոռմանտիկական կերպարներ են։ Իր առեմների յուրա-
քանչյուր հատվածում իսկ նա հանդես է գալիս իրու ոռմանտիկ
պետու։ Նիզամիի ստեղծագործական մերողը ոռմանտիզմն է։ Թի՝
իր ստեղծագործական մեթոդով, և թի՝ իր երկերի կառուցվածքա-
մին մի շարք հատկանիշներով նա հետևել է արևելքի ժողովուրդ-

ների, հատկապես արաբների ու պարսիկների, հետամենի գրական
ավանդություններին։ Սակայն, դրան զուգընթաց, որոշ հարցերում
նա որոշակիորեն հեռացել է այդ ավանդություններից և իր սեփա-
կան, նոր ժամանակներով ու պատմական նոր իրադրություննե-
րով պայմանավորված ինքնուրույն ավանդը մտցրել պուզիայի
մեջ։ Առաջին մեծ նորությունը, որ հատուկ է նիզամիի գրեթե
բոլոր ստեղծագործություններին, այն է, որ շատ պոեմների մեջ
նա տեղ չի տալիս դիրքնական ուժերին, մի բան, որ մինչ այդ
մահմեղական արևելքի գրականության ամենաբարորդ մեթոդներից
մեկը, էր։ Նույնիսկ ոճոթ գեղեցկուհիներին մեջ տեղ գտած ֆան-
տաստիկան չի փոխում նիզամիի դիրքը այդ հարցում։ Այստեղ,
ինչպես գիտենք, ֆանտաստիկան չի ներդյուազել երկի սյուժենին,
այլ հանդես է եկել յոթ արքայադարձների պատմած նովելներում,
որոնք բովանդակության տեսակետով որևէ կապ չունեն պոեմի
հետ։ և ներմուծվել են միհայն հերոսի՝ Բահրամ Գուրի կերպարն ամ-
րողացնելու համար՝ ցուցադրելով նրա զբաղմունքը։ Այսպես որ,
այստեղ էլ, նիզամին՝ պատմելով այդ նովելներն արքայադարձ-
ների բերանով, պատասխանատվությունը չի վերցնում իր վրա և,
հետևագրար, չի հրաժարվում իր սկզբունքից։

Մրկորդ բնորոշ նորությունը հերոսների անհատականացումն
է, և նրանց հոգեբանության, բնակորության, զգացումների ու
գործեակերպի, մի խոսքով՝ ամբողջ կերպարի ոչ միատեսակ,
առանձնաբար ու մեկընդիշա անփոփոխ մնալը, այլ նրանց զարգա-
ցումն ու տիպականացումը։ Միջնադարյան արևելքի գրականու-
թյան, հատկապես կապսի բնորոշ գծերից մեկը հերոսներին մըշ-
տապես կայուն բնավորությամբ կերտելուն էր։ Այսպես, օրինակ,
Ռուսամի, Թեյ Խոսրովի, Աֆրասյաթի կերպարները շատ մեծ
վարչեառությամբ են կերտված պարսկական կապսում։ բայց նրան-
ցից յուրաքանչյուրը ամբողջ կապսի մեջ օժտված է նույն գծերով,
որոնցով հանդես է գալիս սկզբում։ զարգացող դիմագերը, փոփոխ-
ված իրադրություններն ու հանգամանքները մազաշափ անգամ
չեն ազդում նրանց հոգեբանության ու բնակորության վրա։ Նի-
զամիի մոտ ճիշտ հակառակն է, Մեջնունը, ըստ ավանդության և
ըստ արաբական աղբյուրների, սիրահարության մոմենտից իսկ
ինձնեմ էր, դիվահար, որից և ստացել էր իր մականունը։ Մինչդեռ
նիզամիի մոտ այդպես չի նիզամին ձգտում է համոզել, որ պա-

տանեկան հրապուրանքը հայտնի պայմաններում վերածվում է անգիմադրելի մոլուցքի և վերշապիս խելապարության հասցնում Մեջնունին։ Այդպիսի զարգացում են ապրում նաև ևուրովի, թահութամբ Գուրի կերպարները։ Բացի գրանից, Նիզամիի մոտ հերոսներից յուրաքանչյուրն ունի իր հատուկ վերաբերմունքն ու գործելավերաբը՝ միևնույն հանգամանքներում։ որքան տարբեր են, օրինակ, Ֆարհանը, Խոսրովը, Մեջնունը և Յահրամ Գուրը սիրո հարցում ենք որ կարողին է, յուրաքանչյուրի վերաբերմունքը պայմանագործած է յուր իսկ կերպարի ամբողջոթյամբ։ Հեղինակը ձգտում է համոզել, և մեծ մասամբ համոզում է, որ ավալ հերոսն առ կերպ վարդի չեր կարող։ Այսպիսով, թեև Նիզամիի ստեղծագործական մեթոդը ուսմանտիզմն է, բայց վերը հիշված այդ նորությունները առանց այլևայլության նշում են արդեն ուսակցմի որոշ տարբերի առկայությունը։ Իսկ այդ, անշուշտ, պայմանավորված էր բանաստեղծի ապրած ժամանակաշրջանով։ Մենք ասել ենք արդին, որ քաղաքների զարգացմանը գուգընթաց նիզամիի ժամանակաշրջանում գիտության որոշ ճյուղեր գտալի առաջընթաց էին կատարել և, որ զլիսավորն է, քաղաքային արհեստավորական խավերն արդին իսկ սկսել էին օգտագործել գիտության որոշ նվազագույն գործնական կյանքում։ Այս բանն իր հերթին աստիճանաբար խախտում էր միջնադարյան միամիտ պատկերացումները գերբնական ուժերի, ոգիների և այլնի վերաբերյալ։ Իսկ այդ, անշուշտ, իր արտահայտությունն էր գտնում նաև գրականության մեջ։

Ինչ վերաբերում է Նիզամիի ստեղծագործությունների բանաստեղծական արվեստին ու լեզվին, ապա այս կողմից ևս նրանք կատարյալ են։ Ամենից առաջ պետք է շեշտել պատկերների ու համեմատությունների ճոխությունն ու պերճությունը, որ մի կատարյալ ուժորմ էր արեևելքի պարականությունը պոեզիայի մեջ։ Մենք Նիզամին գրականության մեջ հաստատված տրադիցիային համաձայն ճոխ պատկերներով և, առհասարակ վսեմ ոճով, կարելի էր դրեզ միայն բնարական բանաստեղծությունները, առանձնապես բատիդները։ Այդ միանգամայն հասկանալի է։ բովանդակությամբ աղքատիկ ու կեղծ ներբողները պետք էր զարդարել վսեմաջուր դարձվածքներով, պատկերներով ու համեմատություններով, որպեսորդ արտաքին փայլով ծածկվի բովանդակության աղքատու-

թյունը։ Դրա համար էլ, վերջին հաշվով, բասիդների մեջ լեզվի պերճությունն ու տեխնիկայի վարպետությունը դառնում են ուղղակի նպատակ։ Մինչդեռ էպիկական ստեղծագործությունները, որոնց մեջ պատմողական կողմը գերիշխողն է, գրվում էին շատ ամենա պարզ լեզվով, բնական ոճով և անշուրթ։ Ուշագրավ է, որ այդպիսի ստեղծագործությունների հեղինակները, կամենալով ցուցադրել իրենց վարպետությունը, անընդհատ դիմում են լիրիկական շեղումների Նիզամին իր ստեղծագործությունների մեջ գնուարար հրաժարվում է այդ տրադիցիայից։ Նա յուր էպիկական ստեղծագործությունները գարգարում է անգուտական պատկերներով ու համեմատություններով, և դրանով իսկ հիմնադրում մի նոր ուղղություն պոեզիայի մեջ, որին հետևում են հաջորդները։ Հենց դրանով էլ պայմանավորված էր լեզվի հարցը, եթե մինչև այդ էպիկական երկերում լեզուն շատ ավելի աղքատիկ պետք է լիներ, եթե լիրիկական ստեղծագործությունների պերճ լեզուն վահել չեր համարվում էպիկական գործերին, ապա Նիզամին իր հոգակալ պատկերների ու համեմատությունների համար չեր կարող բավարարվել աղքատիկ լեզվավունք եվ իրոք, նրա երկերի լեզուն շափազանց հարուստ է և բնտիր։ Բուրժուական արևելագետները, ակայան, այս հարցում ևս կշտամբում են Նիզամիին, ասելով, թե նրա լեզուն բարդ է։ Որ, իսկապես, Նիզամիի լեզուն ավելի բարդ է, քան, ասենք, Ֆիրդուսունը, այդ ճիշտ է, և դրա պատճառը մենք ցույց տվինք։ Բայց, ինչպես սովորական արևելագետությունն է հաստատել, Նիզամիի լեզվի բարդությունն այն չէ, ինչ որ արքունական բանաստեղծների բասիդներինը։ Այս վերջնների մեջ լեզվի բարդացումը, վերացական, առեղջվածային պատկերներ կերպելը նպատակ է։ Ներբողպատիրները, ասես, անհասկանալի, վերացական ու անսպասելի, պատկերներով կամենում են շըշմեցնել ընթերցողին։ Մինչդեռ Նիզամիի մոտ այդպիս չէ։ Նրա պատկերները չափազանց կոնկրետ են, իրական կյանքից բաղադր, մեծ մասամբ, հիմնված են տեսողական կամ, առհասարակ, զգայարար ընկալելու տպավորությունների վրա։ Այդ պատկերները գժվար հասկանալի են հենց այն պատճառով, որ նրանք կապված են յուր ժամանակի կենցաղի, կուլտուրայի ու պատկերացումների հետ։ պետք է բազմակողմանիորեն ծանոթ լինել այդ դարաշրջանի ոչ միայն պատմությանը, այլև նյութական կուլտուրային ու,

մանավանդ, կենցաղին՝ այդ պատկերներն ու համեմատությունները լուսպին հասկանալու համար:

Ի վերջո, մի բանի խոսք էլ նիզամիի թողած ազդեցությունների մասին: Մենք արդեն ասել ենք, որ հինգ պոեմների ժողովածում, «Ետամսե» ընդհանուր վերնագրով, գրական տրադիցիա է դարձել մաշնեղական արևելքի ժողովուրդների մեջ Բայց այդ նրա թողած ազդեցության մի չնշին կողմն է միայն: Ակած տառներեցրորդ դարից նրա պոեմների նմանությամբ, հենց նույն սրբութեաներով ու վերնագրերով բաղմաթիվ բանաստեղծներ գումար են Շամանությունների զգալի մասը անհաջող կրկնություն է միայն, սակայն կան նաև այնպիսիները, որոնք շատ մեծ գեղարվեստական արժեք են ներկայացնում: Ըստ ուրում, այս անմիջական ազդեցությունները չեն սահմանափակվում ազդրեցնական դրականությամբ, այլ տարածվում են ամբողջ մարմնագական արևելքում: Բազմաթիվ նմանողներից հիշենք մի քանիսին, որոնց ստեղծագործությունները համաշխարհային հընդուկ են վայելում: ազդրեցնական գրականության մեջ այդպիսին է Ֆիզուկին (մեռել է 1562 թվին), բուր և յլլի ու Մեծումա պոեմավ, պարսկական գրականության մեջ այդպիսին են էմիր Խոսրով Դեղիշին (մեռ. 1325), Սելման Սավեզին (մեռ. 1377), Արդուրահման Ջամին (մեռ. 1492), ուզբեկական գրականության մեջ՝ Ալիշեր Նավիկին (մեռ. 1502) և այլն:


* * *

Այսպես, ուրեմն, նիզամին լինելով մեծ մտածող ու բարություն և ունենալով բանաստեղծական մեծ ձիրք՝ յուր անմահ ասեղութագործություններով խոշոր ավանդ է ներդրել մարդկության առաջավոր կուլտուրայի ոսկե ֆոնդի մեջ: Դժգոհ լինելով իր ժամանակից, դատապարտելով անհավասարության, շահագործման ու բռնության վրա հիմնված իր հասարակաբուժը՝ նա միշնագարի խափարի միջից յուր հայացքն է հասել դեպի արագան: Ահա թե ինչու ազդրեցնական ժողովուրդը, Սովետական Միության բոլոր եղբայրական ժողովուրդների հետ այնպիսի խանդավառությամբ տոնեց նրա ծննդյան ութհարյուրամյակը: Իր ամբողջ կյանքը նվիրելով ստեղծագործելուն՝ նա անընդհատ մտորել է ժողովրդի բա-


րորության մասին, տառապել աշխատավոր մասսաների չարփաշ կյանքի համար ու երազել երշանիկ հրուսակային երկրի մասին: Եվ, ահա, այսօր, երբ բուրժուական երկրներում կուլտուրան ու գրականությունը՝ ծառայելով դոլարի բաղաքականության, անկում են ապրում, սովորական ժողովուրդը, որ հաղթական պայքարով կերտել է արդեն անդասակարգ սոցիալիստական հասրակություն, նիզամիի գրական ժառանգությանը յուր արժանի գնահատականն է տալիս՝ դարձնելով ժողովրդական լայն զանդաների սեփականությունը:

Ես ու ոքից փոխառություն չեմ ստացել.
Իւշոր սիրու է թիւապրել, այն եմ ասել,—

որում է նիզամին Գհաղտնիքների գանձարանում: Սովետական ժողովուրդը բարձր է գնահատում վաստակն այն բոլոր մարդկանց, որոնց սիրու ժողովրդի համար է բարախել:



ԳՐԱԾ 5 թ.



հշ.